

# ՕՐԱԿԱՐԳ

# ORAGARK

## ԳԼԵՆԴԵՅԼԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

### A GLENDALE ARMENIAN PERIODICAL

Դ ՏԱՐԻ ԹԻՒ 39 ՅՈՒՆՈՒԱՐ 28 2009  
VOLUME IV NO. 39 JANUARY 28 2009

## ՍՈՍՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ ՌՎ Է ԱՌՈՋՅԻՆ ՔԱՅԼՆ ԱՌՆՈՒՂ

### Չարեհ Աճեմեան

Գլենդէյլի քաղաքային ընտրութիւններին թեկնածուների ցանկը արդէն իր վերջնական տեսքն է ստանում: Ընտրական ժամանակացոյցի համաձայն գրանցման վերջին ժամկետը Յունուարի 29-ն էր եւ յայտարարուած տեղեկութիւնների համաձայն մինչեւ թերթի տպագրութեան յանձնելը քաղաքային տարբեր մարմինների համար գրանցուել են 28 թեկնածուներ:

2009ի Ապրիլի ընտրութիւններին քաղաքի տարբեր մարմինների մէջ 11 նոր պաշտօնեաներ են ընտրուելու: Քոլեջի հոգաբարձու՝ Ուիլքոքը Քինգը միակ պաշտօնեան է, որ չի ցանկանաւում վերընտրուել, ուստի նոյն պաշտօններում վերընտրուելու համար մրցելու են 10 թեկնածուներ: Ընդհանուր 28 գրանցուած թեկնածուներից 16-ը հայ եւ 12-ը ոչ հայեր են: Թեկնածուներից 10-ը մրցում են վերընտրուելու, իսկ 18-ը առաջին անգամ ընտրուելու համար: Ամբողջ 28 մասնակիցներից 14-ը առաջին անգամն է, որ իբրեւ թեկնածու մասնակցում են ընտրապայքարին, իսկ 14-ը նախկինում մէկ կամ ւելի անգամներ թեկնածու են դարձել Գլենդէյլի քաղաքային ընտրութիւններում: Քաղաքային խորհրդի համար մրցում են 13 թեկնածուներ, որոնցից 3-ը վերընտրուելու համար են հրապարակ իջել: Ընդհանուրից 8-ը հայեր են, իսկ 8-ը առաջին անգամն է, որ իբրեւ թեկնածու մասնակցում են ընտրութիւններին:

Յետաքրքրական է, որ ընդհանուր թեկնածուների 50 տոկոսը, իսկ Քաղաքային խորհուրդի թեկնածուների ւելի քան 60 տոկոսը նոր դէմքեր են ընտրապայքարի հրապարակում: Հակառակ Քաղաքային խորհրդի անցնող ամառը հաստատած ընտրապայքարներին տրուող նուիրատութիւնների սահմանափակման օրէնքին, որը վերջին հաշուով սահմանափակում է նոր դէմքերի հրապարակ իջնելը, նոր դէմքերի տոկոսային պատկերը մի կողմից կարող է դրական ցուցանիշ համարուել Գլենդէյլի բնակչութեան քաղաքացիական հետաքրքրութիւնների իմաստով, սակայն դրա անդրադարձները Գլենդէյլի հայ բնակչութեան վրայ կարող է այդքան էլ դրական չլինել:

Սկստի ունենալով 2007-ի ընտրութիւններում ձեւաւորուած այն հոսանքը, որի արդիւնքում հայ թեկնածուները դուրս մնացին Քաղաքային խորհրդից, ցաւօք պէտք է արձանագրել, որ 2009-ի ընտրութիւններում անհրաժեշտ է թւում «Հայկական Բլոկի» իրագործումը, իսկ այդ բլոկի իրագործման ճանապարհին առաջին քայլը հայ թեկնածուների թուի նուազումն է յանուն քուէների կենտրոնացմանը:

Մինչ հայ քաղաքական ուժերը պէտք է գիտակցեն, որ Գլենդէյլի հայութեան հաւաքական յարթանակը շատ ւելի կարելի է քան այս կամ այն անձի կամ հաւաքականութեան հատուածական շահերը, Գլենդէյլի հայ բնակչութիւնն էլ պէտք է իր կենտրոնացած քուէներով ապացուցի՝ համայնքի հաւաքական կամքը, քաղաքի կեանքում իր դերակատարութիւնը վերահաստատելու ուղղութեամբ:

Հայ թեկնածուներից ու քաղաքական ուժերից, ո՞վ է լինելու առաջին քայլն առնողը:



## Նախագահ Օբամայի Երդման Արարատողութիւնը

Գլենդէյլի բնակիչները եւս, ամբողջ Ամերիկայի ու աշխարհի բնակչութեան պէս մեծ ոգէւորութեամբ դիտեցին ԱՄՆ նորընտիր նախագահի Երդման արարողութիւնը, որը տեղի ունեցաւ Երեքշաբթի, Յունուարի 19-ին: (Շար տես էջ 2)



## Գլենդէյլի վարորդները Նախաձեռնին աղիւսակում

Գլենդէյլցիները Ալսթիթ Ապահովագրական Ընկերութեան գեկոյցի համաձայն դասոււմ են երկրի վատագոյն վարորդների շարքին: Այս գեկոյցի մէջ ցանկագրուած են Ամերիկայի 193 քաղաքները, ըստ այդ քաղաքների վարորդների ապահով վարելու չափանիշի: 193 քաղաքներից Գլենդէյլը զբաղեցնում է 192-րդ տեղը, հանդիսանալով ամենավատ վարորդներն ունեցող ամերիկեան քաղաքներից մէկը: (Շար տես էջ 2)



## Վերապրող Ղազարոս Գատեմեանը Մեր միջից գնաց

Հայոց Ցեղացասպանութեան կենդանի վկաների եւ վերապրողների սերնդի վերջին ներկայացուցիչներից՝ Գլենդէյլաբնակ Ղազարոս Գատեմեանը իր մահկանացուն կնքեց 100 տարեկան հասակում: Եղեռնից վերապրող Գատեմեանը նախ հաստատուել է Իրաք ու ապա Միացեալ Նահանգներ: (Շար տես էջ 11)

## Այս Համարում



**էջ 3** Դեմ Դիմաց Հայր Միւռն Ազիկեանի հետ



**էջ 4** Գլենդէյլ, թե՛ հաշաթաղ



**էջ 5** Ներհամայնքային Լուրեր



**էջ 7** «Վանդակէն Դուրս»



**էջ 8** Գլենդէյլի Պատանեկան Լուսափառները

## ՆԱԵՒ

- էջ 2. Քաղաքի Լրաբեր
- էջ 9. Ընտրութիւններ
- էջ 10. Խաչբառ
- էջ 11. Ժամանակացոյց

ՔԱՂԱՔԻ ԼՐԱՔԵՐ

Գլենդեյլի Զանրային Պարտեզի Մեկնարկը

Կանաչ Գլենդեյլի Միակցութեան անդամներն ու մի շարք այլ կամաւորները սկսել են Մոնրոյէ փողոցի Զանրային Պարտեզը կարգաւորելու եւ վար ու ցանքի համար պատրաստելու աշխատանքները: Նրանք հողատարածքը մաքրել են քարերի ու ասֆալտի կտորներից եւ պատրաստել են այն յետագայ աշխատանքի համար: Նրանց առաջին քայլը եղել է Լոս Անջելէսի բնապաշտպանական մի կազմակերպութեան կողմից նուիրուած 30 ժամերի տեղադրումը հանրային պարտեզում: 11,000 քառ. ոտք տարածութեամբ հողամասը, 870 Մոնրոյէ փողոց հասցէում, Քորոլոյս փողոցի անկիւնի վրայ, յատկացուելու է քաղաքի այն բնակիչներին, որ կուզեն վարձակալել նրա 40 մասերից մէկը եւ այնտեղ զբաղուել պարտիզպանութեամբ եւ օրգանիկ բերքեր արտադրելու: Պարտիզպանները վճարելու են տարեկան 80 դոլար իրենց հողակտորի համար ու 20 դոլար նախագումար: Առայժմ ցանկացողներից 25-ի դիմումը վաւերացուել է, իսկ շատեր դեռ գտնուում են սպասողների ցանկի վրայ: Թէեւ նախնական աշխատանքներն սկսուած են, սակայն դեռ շատ անելիքներ կան, պարտեզը մինչեւ յառաջիկայ Ապրիլ ամիսը պատրաստելու համար: Քաղաքապետարանը, որը Դեկտեմբերին վաւերացրել է այս ծրագիրը, հողատարածքում տեղադրելու է ջրամատակարարման սարքեր, գործիքներ, ցանկապատներ, նստարաններ, հեծանիւի ճանապարհներ եւ այլ կարեւոր յարմարութիւններ: Մոնրոյէի հանրային պարտեզը միանալու է Վըրդուօ եւ Փալմըր զբօսայգիներում արդէն աշխատող նման պարտեզների շարքին, իսկ Քաղաքային խորհուրդը տեսնելով քաղաքացիների բուռն ընդառնումը մտադիր է նաեւ չորրորդ պարտեզի կառուցման աշխատանքն սկսել շուտով Քոլոմնաօ փողոցի վրայ:

Նորոգութիւնները Ծարունակուելու են

Գլենդեյլի Զանրային Դպրոցների Կրթաշրջանը որոշեց շարունակել Քոլոմնա եւ Ռուզվելտ դպրոցների վերանորոգութիւնները, թէեւ կրթաշրջանը կանգնած է շատ մեծ նիւթական դժուարութիւնների առջեւ: Նահանգի տրամադրելիք 18 միլիոն դոլարի վարկի վճարման կասեցումը, որը յայտարարուեց անցեալ Դեկտեմբերին, ժամանակաւորապէս կասեցրել էր բոլոր շինարարական աշխատանքները, շրջանիս դպրոցներում, սակայն կրթաշրջանը որոշեց իր ունեցած միջոցներով աւարտի հասցնել այդ աշխատանքները: Քոլոմնա դպրոցում կառուցուելու է արհեստական մարզադահլիճ ծածկուած ֆուտբոլի մի դաշտ:

Այծերի Զօտը Մաքրում է Բլուրները

Գլենդեյլի բլուրներում արածող այծերի խումբը թէեւ զարմանք էին պատճառել անցնող վարորդներին, սակայն մեծ

ծառայութիւն են մատուցում քաղաքին: Գլենդեյլ Քոլեջի մօտակայ բլուրները չորացած խոտերից ու թուփերից մաքրագործելու համար ամենաժամանակաւոր ապահով միջոցն է այս սովորական կենդանիների «գործ»-ի լծելը: «Environmental Land Management» ընկերութիւնը խստացել է, որ միայն 10 օրերի ընթացքին իրենց այծերը պիտի մաքրագործեն բլուրները, որոնք չմաքրուելու պարագային հրդեհների մեծ վտանգ են առաջացնում: Այծերը, որոնք օրական 12 անգամ կարող են արածել մեծ հետաքրքրութիւն էին առաջացրել Քոլեջի շրջափակում: Մեծ թուով ուսանողներ ու անցորդներ մօտեցել էին այծերին, այս բացառիկ տեսարանը նկարելու համար:

Ծխախոտի Օրէնքը Չհաստատոււմ է



«Ամերիկայի Թոքի Ընկերակցութեան» Քալիֆորնիայի մասնաճիւղը իր հրատարակած տարեկան զեկոյցում գերազանց է գնահատել Գլենդեյլում եւ մի շարք այլ քաղաքներում ծխախոտների գործածութեան դէմ կիրարկուած միջոցները: Գլենդեյլը արժանացել է միակ A գերազանց գնահատականին, Լոս Անջելէս գաւառի 88 քաղաքների ընդմիջից, որոնցից 54-ը արժանացել են F գնահատականին: Լոս Անջելէս եւ Լանգ Բիչ քաղաքները արժանացել են C գնահատականի, իսկ հարեւան Բըրբանքը, որը շրջանի առաջին քաղաքներից էր, որ ընդունեց առանց-ծխախոտների քաղաք դառնալու որոշումը, արժանացել է B-ի: Վերոնշեալ միութիւնը քաղաքների գնահատումը կատարել է ըստ դրանց վաւերացրած օրէնքների եւ ոչ օրէնքների գործադրման եղանակին: Գլենդեյլը առայժմ մէկ տարուայ նախապատրաստական իր շրջանն է անցկացնում, ուր քաղաքացիները պատրաստուած են առանց ծխախոտների քաղաք դառնալու համար:

«Գլենդեյլի Գոհարներ» Մրցանակ

Գլենդեյլի Կանանց Իրավիճակի Յանձնախումբը այս տարի եւս կազ-

մակերպելու է «Գլենդեյլի Գոհարները» Մրցանակը, ուր գնահատուելու են քաղաքի այն կանայք, ովքեր հակառակ իրենց դէմ ծառայած դժուարութիւններին յաջողութիւններ են արձանագրում: Յանձնախումբը դիմում է հանրութեանը եւ քաղաքի բոլոր կազմակերպութիւններին, որպէսզի իրենց թեկնածուները առաջարկեն այս մրցանակի համար: Թեկնածուներ կարելի է առաջարկել դիմելով 818 548-4844 հեռախօսահամարով կամ women@ci.glendale.ca.us իմէյլի հասցեով:

Մրցանակակիրները կը գնահատուեն Մարտի 26-ին, Անուշ սրահում: Տոմսերի գինն է 75 դոլար:

Քաղաքային խորհուրդը աւելի խստապահանջ է լինելու

Իր վերջին երկու նիստերի ընթացքում Գլենդեյլի Քաղաքային խորհուրդը քննարկման ենթարկեց քաղաքաշինութեան գօտիների օրէնքների (zoning codes) խախտման պարագաները, որոնք խիստ համատարած են դարձել քաղաքում: Խորհրդակցանքները մտահոգութիւն յայտնեցին, թէ տանտերը առանց ինկատի ունենալու օրէնքները եւ իրաւունքները, կառուցում են իրենց ցանկացած շինութիւնը եւ ապա քաղաքապետարանին կանգնեցնում կա-

տարուածի առջեւ եւ պահանջում իրենց անօրինական շինութեան օրինականացումը: Խորհուրդը նպատակադրել է այս հարցերում լինելու խստապահանջ եւ պարտադրել օրէնքների գործադրումը նոյնիսկ շինութիւնները փլեցնելու գնով: Խորհուրդը նաեւ պնդելու է, որ տների վառարան-գովաջուցիչները անպայման տեղադրուեն տանիքների տակ եւ ծածկուած լինեն:

Գողութիւն Գլենդեյլի Գալէրիայում

Յունուարի 23-ի առաւօտեան, ժամը 5-ին, Գլենդեյլի Գալէրիայի զարդեղէններ վաճառող մի խանութ եւ մտել չորս դիմակաւոր գողեր, որոնք միայն երկու րոպէների ընթացքում 150,000 դոլարի արժողութեամբ թանկագին զարդեր են գողացել ու անմիջապէս հեռացել են գողութեան վայրից: Գալէրիա մտնելու համար նրանք ջարդել են Նորդսթրոմ խանութի մօտ գտնուող ապակէ դուռը եւ ջախջախելով զարդեղէնի խանութի դուռը յաջողել են ներս անցնել: Գողերը հաւանաբար նախապէս ուսումնասիրել են խանութի ապրանքների տեղն ու դասաւորումը: Խանութը, որը աշխատում է 1990-ից սկսեալ ապահովագրուած է եղել: Ոստիկանութիւնը դեռ փնտրում է գողերին:

Գլենդեյլի վարորդները Նախավերջին աղիւսակում

(Շարունակութիւն առաջին էջից) Գլենդեյլի Քաղաքային խորհուրդը քննարկելով այս հարցը, փորձում է լուծումներ գտնել, Ոստիկանական Բաժանմունքի հետ համախորհուրդ: Բոլոր խորհրդակցանքներն էլ գտնում են, որ այս հարցը պիտի դառնայ լուրջ քննարկման առարկայ եւ համապատասխան դաստիարակչական եւ պատժական միջոցներ պիտի կիրառուեն օրինական վարորդների նկատմամբ: Խորհրդակցանքը խանութի աստիճանը իհարկէ չեն բացառում ապահովագրական ընկերութիւնների խաղէրը, որոնք նման զեկոյցներով փորձում են բարձրացնել այս կամ այն քաղաքի վարորդների ապահովագրութեան համար վճարելիք գինը: Նա նշել է թէ քաղաքի ընդարձակուելով նաեւ խտացել է բնակչութեան, վարորդների, հետիոտների, տարեցների ու մանուկների թիւը, որի հետեւանքով էլ բնականաբար աճել է արկածների թիւը: Քաղաքային խորհուրդը պահանջել է Ոստիկանական Բաժանմունքից աւելի խստօրէն հետապնդել օրինազանց վարորդների պարագան:

Նախագահ Օբամայի Երդման Արարողութիւնը



Քաղաքացիները հաւաքուելով սրճարաններում կամ իրենց աշխատանքի վայրերում հեռուստացոյցների ու համակարգիչների առջեւ դիտեցին եւ ունկընդդեցին նորընտիր նախագահի ու փոխ-նախագահի երդումը ու նախագահի առաջին ճառը մեծ յոյսերով ու ոգեւորութեամբ: Նախագահ Օբաման իր պատմական ճառի մէջ նշեց թէ «Այսօր մենք կանգնած ենք ճգնաժամային պայմաններում: Մեր երկիրը պատերազմի մէջ է վայրագութեամբ ու ատելութեամբ առաջնորդուող ուժերի ցանցի դէմ: Մեր տնտեսութիւնը խիստ տկարացած է ի հետեւանք ոմանց ազաւութեան եւ անպատասխանատուութեան նաեւ դժուար այլընտրանքը ընտրելու եւ մեր ժողովուրդը նոր ժամանակների համար պատրաստելու գործում մեր հաւաքական ձախողութեան պատճառով: Մարդիկ կորցնում են իրենց տներն ու աշխատանքը: Փակուում են աշխատատեղերն ու բիզնէսները: Մեր առողջապահական ծառայութիւնները շատ սուղ են ու մեր դպրոցներից շատերը ծախողութեան են մատնուել: Ամէն օր աւելիով է փաստուում որ մեր էներգիայի գործածութեան եղանակը ուժեղացնում է մեր թշնամիներին ու սպառնում է մեր մոլորակը: Սրանք տագնապի այն ցուցանիշներն են, որոնք կարելի է չափել վիճակագրական տուեալներով: Սակայն ոչ պակաս կարեւոր է այն անչափելի վտանգը, այն վախը մեր երկրում, թէ Ամերիկայի տկարացումը անխուսափելի է եւ այն որ մեր գալիք սերունդները պիտի սահմանափակեն իրենց հեռանկարը: Այսօր ես ասում եմ ձեզ որ մեր դէմ գտնուող դժուարութիւնները իրական են: Դրանք լուրջ տագնապներ են ու դրանք բազմաթիւ են: Դրանց դիմագրաւելը հեշտ չի լինելու եւ չի իրականացուելու կարճ ժամանակամիջոցում: Սակայն թող սա պարզ լինի թէ դրանք դիմագրաւուելու են»:

ՕՐԱԿԱՐԳ
P.O. Box 4214
Glendale CA 91222-0214
PHONE 818.503.2042
FAX 818.484.2034
EMAIL info@oragark.com
WEB www.oragark.com

ORAGARK A Glendale Armenian Periodical
SINCE NOVEMBER 2005
PUBLISHER Oragark News & Publishing
EDITOR Zareh Adjemian
LAYOUT Ari Boyajian | Image Cube Design
«ՕՐԱԿԱՐԳ» Գլենդեյլի Պարբերաթերթ
ԽՄԲԱԳԻՐ Չարէհ Աճեմեան
ԵԶԱՐԴՈՒՄ Արի Պոյաճեան | Image Cube Design
Ստորագրութիւն կրող նիւթերն ու յօդուածները անպայման չեն ներկայացնում խմբագրութեան տեսակետները: Ձեր առաքած յօդուածները, նամակներն ու հեռախօսները հնարաւորութեան պարագային կը տպագրուեն, իսկ չտպագրուած նիւթերն ու նկարները չեն վերադարձուելու:

ԴԵՄ ԴԻՄԱՑ

# Ծայրագոյն Վարդապետ Հայր Միւռն Ազնիկեանի հետ

Վերջին տարիների ընթացքին Կիլիկիոյ Կաթողիկոսը գեղեցիկ աւանդութիւն է որդեգրել, ըստ որի իւրաքանչիւր տարին հռչակուած է՝ որպէս մեր ժողովրդի նուիրական արժէքներից մէկի վրայ սեւեռելու եւ այդ արժէքը ուշադրութեան ու գուրգուրանքի առարկայ դարձնելու մի ժամանակաշրջան: Այսպիսով 2003 թիւը հռչակուեց՝ «Աստուածաշունչի Տարի», 2004-ը՝ «Ընտանիքի Տարի», 2005-ը՝ «Ազգային Պահանջատիրութեան Տարի», 2006-ը՝ «Հայ Դպրոցի Տարի», 2007-ը՝ «Հայ Լեզուի Տարի», 2008-ը՝ «Քրիստոնէական Դաստիարակութեան Տարի», իսկ 2009-ը՝ «Երիտասարդութեան Տարի»:

Այս առիթով հանդիպեցինք համայնքիս երիտասարդութեան կրօնական դաստիարակութեան հարցերով զբաղուող հոգեւորականներից՝ Տէր Միւռն Ծայրագոյն Վարդապետ Ազնիկեանի հետ:


## Կենսագրական

Տէր Միւռն Ծայրագոյն Վարդապետ Ազնիկեանը ծնուել է 1957 թուին, Բէյրութում: Նախնական կրթութիւնը ստացել է Ազգային Աբգարեան վարժարանում եւ միւլեւոյն ժամանակ մասնակցել է Ա.Աստուածածին եկեղեցու դպրաց դասին: Ապա ընդունուել է, որպէս Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Դպրեվանքի ուսանող: 8-տարի Դպրեւանքում ուսանելուց յետոյ յաճախել է Միջին Արեւելքի Աստուածաբանական համալսարանը: 1980-ին ձեռննդուել է, որպէս կուսակրօն եկեղեցական, իսկ 1995-ին ստացել է Ծայրագոյն Վարդապետի աստիճան: 2000-ին աւարտելով Փիթսբուրգի Աստուածաբանական համալսարանը, ստացել է Մագիստրոսական վկայական: Հայր Միւռնը ունեցել է եկեղեցական բեղուն գործունէութիւն, ստանձնելով պատասխանատու պաշտօններ՝ Բէյրութում, Նիւ Եորքում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում եւ Ֆլորիդայում: Օգոստոս 2005-ից սկսեալ Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի միջոցով հրաւիրուել է ծառայելու թեմի կրօնական, հոգեւոր եւ կրթա-դաստիարակչական ասպարեզներում: Նրա բազմակողմանի պատասխանատուութիւնների շարքին են՝ Ազգային վարժարաններում կրօնագիտութեան դասաւանդումը, Կիրակնօրեայ դպրոցների վերահաստիւնը, Երիտասարդական խմբերի ղեկավարութիւնը եւ Ս.Գրոց Սերտողութեան դասընթացների կազմակերպումը:

## Ինչո՞ւ կարելոր է երիտասարդութեանը կապել եկեղեցուն

Երիտասարդութիւնը ամէն մի ժողովրդի ողնաշարը կազմող այն աշխոյժ եւ եռանդուն բաժինն է, որի մէջ է իմաստաւորում ժողովրդի ապագան: Կենսախայտ ու կեանքով լեցուն երիտասարդին այնպէս պէտք է թրծել եւ դաստիարակել, թէ տանը, թէ դպրոցում եւ թէ ամէնուր, որ նա օգտակար մի տարր դառնայ, որպէս անհատ մարդ եւ որպէս մեր ազգային կառոյցների մէջ աշխատող հայ, որը վաղը պիտի ստանձնի նոյն համայնքի առաջնորդողի, ղեկավարի ու դաստիարակի պարտականութիւնները:

Այսօրուայ աշխարհը այնպիսի հրապուրիչ, առիթնող զբաղումներ եւ հետաքրքրութիւններ է հրանցնում երիտասարդներին, որ նրանց հեռացնում է վեհ գաղափարներից: Դիւրին եւ հաճելի ապրելակերպը երիտասարդութեան մէջ հետզհետէ արթնացնում է անտարբերութեան հոգեբանութիւնը: Հարցերը



թեթելի առնելը, անպատասխանատու, խուսափողական, կրաւորական եւ նոյնիսկ պարտուողական դիրքերից դիտել աշխարհը եւ հայ կեանքը, այսօր տարածուած հոգեբանութիւններ են նրանց մօտ:

Համատարած այս անտարբերութեանը դէմ դնելու, գործօն, աշխոյժ եւ հաւատացեալ սերունդ ունենալու համար մեր ծնողները, դաստիարակներն ու պատասխանատու հոգեւորականներն ու աշխարհիկ անհատները պէտք է լայն տեղ տան մեր երիտասարդներին եւ նրանց կրօնական դաստիարակութեան հարցերին: Մեր եկեղեցու հոգեւոր առաջնորդները առաջնահերթ տեղ եւ կարելորութիւն են տալիս մեր երիտասարդներին, առաւելագոյն չափով եկեղեցուն կապելու հրամայականին:

## Ինչպե՞ս կարելի է ներգրաւել երիտասարդութեանը եկեղեցուն աշխատանքներում

Եկեղեցուն, թէ՛ ազգային զանազան շրջանակներում հաճելի եւ օգտակար միջոցառումներ կազմակերպելով, դաստիարակչական սեմինարներով, Սուրբ Գրոց Սերտողութեան դասընթացներով, երիտասարդութեանը ի մի հաւաքելու, դաստիարակելու ու միաժամանակ գործի լծելու մեր ստեղծած հնարաւորութիւններով: Այն ինչ այսօր պակասում է մեզ մօտ՝ հետաքրքրութեան, եռանդի եւ հզօր փափագ ունենալու պակասն է: Մենք չունենք այն գրաւիչ միջոցներն ու գործելաձեւերը, որ հրապուրենք այսօրուայ երիտասարդներին: Աշխարհիկ կեանքում հրամցուող բազմաթիւ հաճոյքներ կան, սակայն դրանք կորստեան են տանում, մինչ մեր պարզ ու անհրապոյր թուացող հրամցելիքը՝ հոգեւոր փրկութիւնն է:

Երիտասարդութեան հոգեւոր դաստիարակութիւնը եւ նրա նկարագրի կոփումը սկսում է ընտանիքից, տարածուած է մինչեւ դպրոց ու նաեւ ընկերային շրջանակները: Երիտասարդը ազդու է վերը նշուած բոլոր միջավայրերից: Այդտեղ է, որ նա պատրաստուել է վաղուայ համար: Վաղուայ առողջ, գիտակից երիտասարդութիւնը, որը պիտի ստանձնի մեր ազգային կեանքի տնօ-

րինութիւնը, պէտք է՝ որ այսօր դաստիարակուի ճիշտ արժէքներով: Նա պիտի ծանօթ լինի մեր անցեալի պատմութեանը, մեր կրօնական աշխարհայեացքին, սուրբերի կեանքին ու գործունէութեանը: Այդ ճշմարիտ հերոսներն են, որ պիտի դառնան մեր երիտասարդի օրինակները, եւ ոչ այն աշխարհիկ սինեմայի դերասանը կամ երգիչը, որոնց փորձում են այսօր որպէս նոր սերունդների օրինակելի տիպարներ ներկայացնել:



## Այս ուղղութեամբ ի՞նչ աշխատանքներ են իրականացում մեր եկեղեցիներում

Մեր Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական դաստիարակութեան գրասենեակը, որի պատասխանատուութիւնը ստանձնել ենք ես եւ Հայր Պարթեւը, մշակում ենք շրջանի Կիրակնօրեայ վարժարանների, երիտասարդական խմբերի ու նաեւ Ազգային վարժարանների կրօնագիտութեան պարապմունքների ծրագիրները եւ հսկում դրանց իրականացմանը: Կազմակերպում ենք ուսուցչական թէ՛ երիտասարդական սեմինարներ, դասախօսական շարաններ, շարականների ուսուցման դասարաններ, երգչախմբային պարապմունքներ, հանդէսներ եւ այլն: Այդ բոլոր աշխատանքներում մենք փորձում ենք Քրիս-

տոնէական եւ ազգային մեր արժէքները փոխանցել մեր նոր սերունդին, որպէսզի նրանք զինուած լինեն կեանքում սպասուող որեւէ դժուարութեան ու ծախողութեան առջեւ: Դրական եւ ոչ ժխտական կերպով դէմն ենք դնում արտաքին այլասերիչ ու նաեւ աղանդաւորական շարժումներին, որոնք փորձում են ինքնութիւնից պարպել անհատը եւ դրանով կործանել ազգը:

Ներկայիս ունենք շուրջ 350 աշակերտներ, շրջանի զանազան եկեղեցիների Կիրակնօրեայ վարժարաններում, որտեղ յաճախող երեխաները ոչ միայն ծանօթանում են հայերէն լեզուին, այլ իւրաքանչիւր Կիրակի ընթերցում են Աւետարանից ընտրուած հատուածներ, կարդում աղօթքներ եւ սաղմոսներ եւ երգում շարականներ: Այստեղ արդէն մատղաշ տարիքից կոփուել են նրանց հոգիները հաւատքով ու գիտութեամբ: Երիտասարդական խմբերը նոյնպէս ոչ միայն նոյն աշխատանքներով են զբաղուել, այլ նաեւ՝ ծառայում են, եկեղեցուն ստանձնելով գործնական պարտականութիւններ: Իսկ Ազգային դպրոցներից ներս իրականացնում ենք կրօնական դասընթացների ծրագիրը: Աշակերտների հոգեբանութիւնը լաւ հասկանալով փորձում ենք հաճելի եւ եռանդուն մթնոլորտում դասը սիրեցնել, սովորեցնել եւ փոխանցել մեր արժէքները: Այստեղ նկարագրի կերտելու եւ ապագայ սերունդները դաստիարակելու վեհ գործին են լծուած թէ՛ հոգեւորական եւ թէ՛ միւս դաստիարակները: Իսկ այն մեծ թուով աշակերտութեան համար, որ հանրային դպրոցներ են յաճախում, որտեղ չեն պարապուել կրօնական գիտելիքները, փորձում ենք առիթներ ստեղծել արտադասարանային պարապմունքների: Այս առումով ՀՕՍ-ը եւ Դաւթեան-Մարիամեան casps հաստատութիւնը իսկապ աշխատանք են

կատարում: Կարելոր է, մանաւանդ այս աշակերտների պարագային, որ ծնողները գիտակցելով կրօնական ու ազգային դաստիարակութեան անհրաժեշտութիւնն ու դրանց բացակայութիւնը հանրային դպրոցներում, որեւէ կերպ փորձեն լրացնել այդ բացը, իրենց զաւակներին ուղղակի եկեղեցի տանելով ու վերը նշուած բազմատեսակ աշխատանքներին մասնակից դարձնելով: Իմ փափագն է, որ մեր բոլոր հայ զաւակները առիթն ունենան յաճախելու Ազգային վարժարաններ, իսկ կոչս՝ մեր ազնիւ գործատէրերին՝ որ յատուկ մի հիմնադրամ ստեղծեն այս նպատակով, որպէսզի ոչ մի հայ երեխայ անմասն չմնայ հայ վարժարանից:

ՏԵՍԱԿՆ

ԼՈՒՍԱՆՃԵՐՑ

Բաներ, որ պետք է անել այս տնտեսության մեջ

Պատրիկ Ազատեան

Մինչ Միացեալ Նահանգների տնտեսութիւնը ճգնաժամ է ապրում, ընկերութիւններում աշխատանքից ազատում են բազմաթիւ լաւ մարդիկ: Տնտեսութեան անկման նշանները շատ ակտիւ ակնյայտ են լինելու տօնական օրերին:

Սակայն, ամեն ինչ այդքան էլ տխուր ու յուսահատիչ չէ: Կան գոնէ հարկաւոր չէ այդպիսին լինի: Մենք կարող ենք նախաձեռնող լինել այսպիսի դժուար ժամանակներում:



Ես յանգել եմ հետեւեալ եզրակացութիւնների, որպէսզի կարողանամ մեր լաւագոյնը կատարել՝ այս դժուար կացութեան օրերին:

Նախ եւ առաջ, քէթ դէպի ծովափ: Ես իմ կեանքի մի շարք կարելու որոշումները կայացրել եմ ծովափում, երբ փորձում էի ըմբռնել ու վիճակագրել խորութիւնը: Ետ համալսարան վերադառնալ: Որոշումը՝ տրուեց ծովափում: Կեանքիս յատկանշական յարաբերութեանը վերջ տալու որոշում: Ծովափում: Հաշտուե՞լ նուազող մագերիս իրողութեան հետ եւ խուզե՞լ գլուխս, դարձեալ՝ ծովափում: Խաղաղական ու վիճակագրական տեսարանն ու ծայրը յարմարագոյն միջավայրն է մեր ընտրութիւնները խորապէս վերանայելու եւ մեզ վերազինելու համար:

Երկրորդ խորհուրդը՝ ակտիւ առողջ կեանք ու կենցաղ վարելու առաջադրանքն է: Պատրաստուած ճաշերի գումարները իրար վրայ են գումարում, իսկ միւս կողմից դրանք հակաառողջապահական էլ են սեպուլում: Ճաշարաններում ճաշելը կարող է շրջանակ ստեղծելու համար լաւ լինել, բայց դա չպէտք է ամենօրեայ բնոյթ ստանայ: Ես Կիրակի իրիկուններս յատկացրել եմ յառաջիկայ շաբաթուայ համար ուտելիքի պատրաստման աշխատանքին: «Family Guy» հեռուստածրագրին հետեւելով՝ ես պատրաստում եմ կանաչեղէն ու փրօթիկ պարունակող իմ գալիք շաբաթուայ ճաշերը: Փորձում եմ որքան հնարաւոր է, ճաշս հետս աշխատանքի տանել: փոքրիկ է ճաշս, բայց ինձ ուրախացնում է: Ինչպէս «Family Guy»-ի Փիթերն է աւում՝ Հի, հի, հի, հի . . .

Եթէ ծխող էք, ժամանակն է, որ ձեր ընտանիքին տաք ամենալաւ նուէրը, որ կարող էին ստանալ՝ մի քանի տարուայ յաւելացում ձեր կեանքին եւ ակտիւ առողջ վիճակ ձեր հասունութեան տարիներին: Այո, այո, գիտեմ, Յակոբ հօրեղբայրը մէկ կապ առանց ֆիլթրի-ի ծխախոտ էր ծխում ու մեռաւ՝ 99 տարեկան հասակում: Բայց գիտե՞ք ի՞նչ: Դուք Յակոբ հօրեղբայրը չէք: Նա կարող էր անտեղեակ լինելու պատրուակը ունենալ, բայց դուք՝ չէք կարող:

Երրորդ՝ Փոխէք Բենզը հայրիկ (խառն էներգիա օգտագործող) ինքնաշարժի հետ: Այսպիսով՝ դուք կարող էք բարի գտնուել թէ ձեր գրպանի ու թէ կենսոլորտի հանդէպ: Հայրս մի անգամ ինձ ասաց՝ «Եթէ բարի լինես դրամի հետ, այն հետոյ կը մնայ, իսկ եթէ անյարգես նրան, կը փախչի քեզմիջ»: Թէեւ ինքս մինչեւ այսօր փորձում եմ այդ խրատը գործադրել, սակայն չեմ խուսափում նոյնը քարոզելուց: Լաւ մարզիչ լինելու համար հարկաւոր չէ անպայման լաւ մարզիկ լինել: Անկասկած սիրուն կերեւաք «550 Ես» Բենզի մեջ, սակայն ակտիւ խելացի էք երեւալու հայրիկ ինքնաշարժի մեջ:

Չորրորդ խորհուրդն է՝ գիրք կարդալ: Ինչպէ՞ս էք դա կատարում: Կասեցրէք հեռուստացոյցի կարելային բաժանորդագրութիւնը եւ սահմանափակէք ձեր հեռուստալիքները՝ լուրերի ակթներով: Հաւատացէ՛ք ինձ, այնքան էք ծանձրանալու տեղական լուրերից, որ մի քանի օրից կը յայտնուէք գրախանութում: Կարող էք սկսել ձեր ընթերցումների շարանը փայլուն շապիկով պարբերաթերթերից եւ հասնել Ալբեր Քամոյի գրութիւններին:

Ես անդրադարձել եմ, որ ընթերցումը կարող է բուժիչ յատկութիւն ունենալ, թէեւ կարող էս մի բան էլ սովորել: Հակառակ ֆիլմ նայելուն, կարդալու համար ստիպուած ես կենտրոնանալ, որպէսզի պատմութիւնը ամբողջութեամբ հասկանաս ու երբ կենտրոնանում ես, ուրիշ ամեն բան երկրորդական է դառնում:

Հինգերորդ խորհուրդ՝ «Փոքեր» խաղացէք: Հիմա ճիշդ ժամանակն է, որ գօտիները պնդացնէք եւ յանկարծակի ու չնտածուած Լաս Վեգասեան ճամբորդութիւնները կրճատէք: Այլեւս հրապուրիչ չի թոււմ ասելը, որ՝ «Օ՛հ, այո՛. անցեալ շաբաթավերջ սիրտս ուզեց Վեգաս ճամբորդել»: Ընկերներին հրաւիրէք, թեթեւակի գինովցէք ու թողէք խաղը սկսի: Մինչեւ իսկ, կարող է մի քիչ էլ դրամ շահէք:

Վեցերորդ՝ Վերադարձէք դպրոց: Հոգ չէ եթէ արդէն իսկ մէկ բակալատորի տիտղոս ստացել էք: Մինչեւ տնտեսութիւնը վերաբնանայ իր «ձմեռային քնից», քանի տարի է տեւելու եւ դա լաւ առիթ է ինքներդ ձեզ նորից վերակերտելու համար: Ստացէք երկրորդ բակալատորը, որով ակտիւ հրապուրիչ կը դառնաք գործատերերի համար, կամ նուաճէք ձեր այդքան ուզած մագիստրոսական վկայականը: Դուք հիմա կարող էք ձեր ուսումը շարունակել համացանցի միջոցով՝ ձեր բնակարանի հանգստի ներքոյ:

Եւ ամենավերջինը, բայց՝ ոչ անկարելի, տօնական օրերին նուիրէք ակտիւ քիչ բախտաւորներին: Ձեր ընկերուիկն կարող է առանց «Գուշի» կօշիկների մնալ, նոյնիսկ եթէ նրանք առաւել ձեր տեսողութեան հաճոյքի համար են, քան իրը: Աւելի հաճելի այն է, որ նուիրում են նրան, ով իրական կարիքի մեջ է:

Առայժմ՝ այսքանը: Հա, իսկապէս, մոռացայ ակտիւացնել վերջին, ամենավերջին խորհուրդը: Բայց անմաքատակ, ձեր՝ աշխատանքի դադարի ժամերին: Իհարկէ, եթէ դեռ աշխատում էք: Եթէ՛ ոչ, կարող էք «Փոքեր» խաղալուց փոքր ինչ դադար վերցնել եւ ձեր ընկերներին խնայեցնել:


Պատրիկ Ազատեանին կարող էք գրել [respond@fromthemargins.net](mailto:respond@fromthemargins.net) էլ. [huugtnl](mailto:huugtnl):

ԳԼԵՆԴԷՅԼ ԹԻ՛ ԽԱՆԱԹԱԳ ԽԱՇ (Խռովարարների Ազգային Շարժում) Հայկական Աւանդական Կուսակցութիւն

Խորէն Արամունի

Պատմական ակնարկ.

Ծնունդ է առել դեռեւս մ.թ.ա. երկրորդ-երրորդ հազարամեակներում: Հին եգիպտացի էլիտար հասարակարգն ու իշխանաւորները տաւարի, խոզի եւ ոչխարի մորթից յետոյ, առանձնացնելով նրանց գլուխը (քեալլէն), տոտիկները, փորոտիքն ու երբեմն նաեւ լեզուն, որպէս ոչ պիտանի մասեր, շարտում էին ստրուկների առաջ: Սոված ստրուկները հաշուի չառնելով անասուններից իրենց բաժին հասած կտորների որակն ու ծանրամաս լինելը, ախորժակով ուսում էին: Երկար չի տեւում, ստրուկների



մեջ ի յայտ են գալիս կազդուրուած, եւ ուժեղ մարդիկ, որոնք ստանձնում են իրենց կեանքից կշտացած, դժգոհ խռովարարների ապստամբութեան դեկլարութիւնը եւ իրմք է դրում խռովարարների Ազգային Շարժում (ԽԱՇ) կազմակերպութիւնը, իսկ իշխանութիւններն ու էլիտար խաւը ստրուկների այդ սուպը պարզապէս անլանում են ԽԱՇ: Ժամանակ է անցնում, իշխանութիւնները տեսնելով ԽԱՇ-ի գօրութիւնն ու նրա բուժիչ յատկութիւնները, յատկապէս ոսկորների ամրացման հարցում, ստրուկներին արգելում են օգտուել ԽԱՇ-ից ու այն դարձնում են պալատականների ու հարուստ խաւի ամենայարգելի ու պատուաբեր ճաշատեսակը:

Խորիդային շրջանում եւս այն համարուել է էլիտար խաւի ու կենտրոնի անդամների համար ամենապատուաբեր սուպը, իսկ ցածր՝ բանւոր-գիւղացիական ստրկացած խաւը Սիբիր չքուէլու վախից, ԽԱՇ-ը քողարկելով լաւաշի տակ, կերել է ընդյատակեայ, իշխանաւորներին հաւատացնելու, իբր ուսում են ցամաք հաց, թթու, բողկ ու տնամերձի կամաչի:

Ետ խորիդային շրջանում, ընդյատակները ազատագրուելով ստրկացումից, իրենց ձեռքն են առնում իշխանութեան լծակները եւ «խռովարարներ» բառը փոխարինում են «Հայոց»-ով, այնպէս, որ խռովարարների Ազգային Շարժում (ԽԱՇ)-ը դառնում է Հայոց Ազգային Շարժում (ՀԱՇ):

ՀԱՇ-ի արտերկրի գործիչները, ելնելով որոշ հանգամանքներից, կառչած մնացին իրենց կազմակերպութեան հին անուանը՝ ԽԱՇ-ին, սկսեցին այն գովազդել Գլենդէյլում՝ հայկական պատմական քաղաքների եւ յուշակոթողների անունները կրող գործող էլիտար քաբաբանոցների դմներին ու պատերին, որպէսզի մարդկանց յորդորեն՝ հաւաքուել ԽԱՇ-ի շուրջ, իրականացնելու իրենց շարժման իդէալական ծրագրերը:

Իսկ մենք, յարմար նկատեցինք՝ այսուհետ Գլենդէյլին տալ հայաշունչ ԽԱՇԱԹԱԳ անուանումը, որպէսզի Լիթլը Արմենիայից յետոյ այն դառնայ հայկական անունը կրող երկրորդ քաղաքը ԱՄՆ-ում:

ՕՐԱԿԱՐԳ Գրեցէ՛ք Օրակարգին Խօսեցէ՛ք մեզ հետ

Սիրելի ընթերցող, Արդե՞օք պատահել է, որ ճերմակ թղթին նայելով գայթազողութիւն ունենաք մի բան գրելու: Իսկ ճերմակ թղթից բացի, միւս գայթազողութիւնը՝ ընթերցողն է: Ահաւասիկ մենք ձեզ ենք տրամադրում՝ ճերմակ թուղթն ու ընթերցողը: Առէ՛ք գրիչն ու գրէ՛ք մեզ: «Օրակարգ»ի նամականի սիւնակը ձեր «ճերմակ թուղթն» է: Գրէք ձեր մասին, ձեր մտահոգութիւններն ու տեսակէտները քաղաքի մասին մեզ եւ մեր ընթերցողներին փոխանցէք:

Գրէ՛ք Օրակարգին - Խօսեցէ՛ք մեզ հետ - Սպասում ենք՝ Ձեզ... Oragark - PO Box 4214, Glendale, CA 91222 - [info@oragark.com](mailto:info@oragark.com)

Գիթառի Դասեր Արմեն Մովսիսյան Armen Movsisyan guitar lessons (818) 848-1944

A&A International Shipping Inc International shipping and forwarding, warehousing and and consolidation Մեքենաների եւ բեռների փոխադրում ծովային ճանապարհներով ցանկացած երկիր Մեքենաների փոխադրում՝ Հայաստան, ամեն շաբաթ, գեղջուած գներով: Բալաբէկ Բարսամեան | Balabek Barsamyan 818.667.8272 www.aa-shipping.com

ՆԵՐՉԱՍՏՆԵՄՅՐՆ

Հայոց լեզուի եւ հայ գրականության օլիմպիադա եւ Հայագիտական գիտելիքների մրցոյթ Հայաստանում

Լոս Անջելեսում Հայաստանի Հանրապետության Գլխավոր հիւպատոսութիւնը տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը 2009 թուականի, Յուլիսի 10-17-ը երեւանում միաժամանակ կազմակերպում է դպրոցականների երկու համահայկական միջոցառում՝ Հայոց լեզուի եւ հայ գրականութեան 4-րդ օլիմպիադան եւ Հայագիտական գիտելիքների մրցոյթ:

Ձեռնարկների նպատակն է՝ խթանել եւ խրախուսել հայոց լեզուի, հայ գրականութեան, հայոց պատմութեան եւ հայ մշակոյթի իմացութիւնը, առողջ մրցակցութեան պայմաններում դրս ելորել իրենց գիտելիքներն ու ստեղծագործական կարողութիւնները, նպաստել առաւել շնորհալի պատանիների յայտնաբերմանը, ինչպէս նաեւ՝ ծանօթանալ տարբեր երկրներում բնակուող հասակակիցների հետ:

Օլիմպիադային եւ Հայագիտական գիտելիքների մրցոյթին կարող են մասնակցել 14 տարին լրացած եւ բարձր տարիքի անհրաժեշտ իմացութիւն ունեցող դպրոցականներ:

Մասնակիցներ կարող են լինել հայերէն ուսուցմամբ վարժարանների եւ կրթօջախների /այդ թում՝ միօրեայ / սաները, ինչպէս նաեւ՝ այլ դպրոցներ յաճախող հայ եւ օտարազգի պատանիներ:

Հայոց լեզուի եւ հայ գրականութեան օլիմպիադայի աշխատանքային լեզուն հայերէնն է: Օլիմպիադայի արդիւնքները ամփոփուելու են երկու՝ հայոց լեզուի գրաւոր եւ հայ գրականութեան բանաւոր մրցոյթների արդիւնքներով /տես. «Հայոց լեզուի եւ գրականութեան օլիմպիադայի ուղեցոյց»/:

Հայագիտական գիտելիքների մրցոյթն ընդգրկում է հարցեր՝ հայոց պատմութեանից եւ հայ մշակոյթից: Մրցոյթին կարող են մասնակցել նաեւ ոչ հայախօս պատանիներ՝ իրենց նախընտրած լեզուներով /տես. «Հայագիտական գիտելիքների մրցոյթի հարցաշար»/:

Ցանկութեան եւ համապատասխան յայտ ներկայացնելու դէպքում հնարաւորութիւն է ընձեռնում մասնակցել եւ՝ Օլիմպիադային, եւ՝ Հայագիտական գիտելիքների մրցոյթին:

Հայոց լեզուի եւ գրականութեան օլիմպիադայի կողմնորոշիչ թեմաների ցանկին եւ Հայագիտական գիտելիքների մրցոյթի ամբողջական հարցաշարին կարելի է ծանօթանալ նաեւ Հայաստանի Հանրապետության կրթութեան եւ գիտութեան նախարարութեան պաշտօնակա եւ Կրթական տեխնոլոգիաների կենտրոնի ինտերնետային կայքէջերում:

Հայոց լեզուի եւ գրականութեան օլիմպիադայի եւ Հայագիտական գիտելիքների մրցոյթի յաղթողների համար սահմանուել են 1-ին, 2-րդ եւ 3-րդ կարգի մրցանակներ: Մրցութիւնն ու մրցանակաբաշխութիւնը կազմակերպուում են ըստ տարիքային խմբերի:

Հայոց լեզուի եւ գրականութեան օլիմպիադայի եւ Հայագիտական գիտելիքների մրցոյթի մասնակիցները երեւանում պէտք է լինեն Յուլիսի 10-ից ոչ ուշ:

Յաւելեալ հարցերով եւ լրացուցիչ տեղեկութիւններ ստանալու համար կարող էք դիմել Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հիւպատոսութեան զանգահարելով (310) 657-6102 X227 հեռախօսահամարով:

լիքների մրցոյթի մասնակիցների համար, որպէս լրացուցիչ նախատեսուում են՝ ասմունքի, ճարտասանութեան, հայրենասիրական երգի եւ այլ ստեղծագործական մրցոյթներ, վիկտորինաներ, որոնց կարելի է մասնակցել ըստ ցանկութեան: Այս մրցոյթներում յաղթողների համար սահմանուել են յատուկ եւ խրախուսական մրցանակներ:

Պատուիրակների համար նախատեսուած են նաեւ տարաբնոյթ մշակութային, ուսուցողական եւ զուարճային միջոցառումներ:

Հնարաւորութեան դէպքում, ցանկալի է Օլիմպիադայի եւ Մրցոյթի մասնակիցների միացեալ պատուիրակութիւն /խումբ/ ձեւաւորել, ըստ՝ երկրի կամ բնակավայրի՝ առաւել բանիմաց թեկնածուների ընտրութեան եւ ներկայացուցիչներ ուղարկելու խնդիրը համակարգելու համար: Մասնակիցների կազմում կարելի է ընդգրկել նաեւ համապատասխան օտարազգի պատանիներ: Պատուիրակութիւնը /խումբը/ պէտք է ունենայ ղեկավար եւ մասնակիցների թուակազմի համեմատ ուղեկիցներ՝ մինչեւ 10 պատանու համար 1 ուղեկցող համամասնութեամբ: Պատուիրակութեան /խմբի/ ղեկավարն իր նախընտրութեամբ երեւանում կարող է համալրել համապատասխան մրցութային յանձնաժողովի կազմը:

Ձեռնարկներին համահայկական բնոյթ հաղորդելու համար հայցում եւ ակնկալում ենք հայկական համայնքների, ազգային-հասարակական հաստատութիւնների եւ կազմակերպութիւնների, թեմական եւ կրթական խորհուրդների յատուկ ուշադրութիւնն ու աջակցութիւնը: Ռեքլամ կը լինենք բոլոր հայկական կրթօջախներից պատուիրակներ ընդունելու համար:

Օլիմպիադայի եւ Հայագիտական մրցոյթի ընթացքում մասնակիցների, ղեկավարների եւ ուղեկցողների կեցութեան, սննդի եւ շրջապայայտան ծախսերը ստանձնում է Հայաստանի Հանրապետութիւնը: Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպութիւնները, կրթօջախները, բարերարները:

Մասնակցութեան յայտերը պէտք է լրացնեն պատուիրակութիւնների /խմբերի/ ղեկավարները եւ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութիւն փոխանցեն մինչեւ 2009 -ի Յունիսի 10-ը: Մինչեւ Յուլիսի 1-ը հարկ է ներկայացնել նաեւ երեւան ժամանելու եւ երեւանից մեկնելու ժամանակտը եւ այլ մանրամասնութիւններ՝ գործընթացը պատշաճ կերպով կազմակերպելու համար:

Հայոց լեզուի եւ հայ գրականութեան օլիմպիադայի եւ Հայագիտական գիտելիքների մրցոյթի մասնակիցները երեւանում պէտք է լինեն Յուլիսի 10-ից ոչ ուշ:

Յաւելեալ հարցերով եւ լրացուցիչ տեղեկութիւններ ստանալու համար կարող էք դիմել Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հիւպատոսութեան զանգահարելով (310) 657-6102 X227 հեռախօսահամարով:

Գլենդէյլի Հայ Դատի Յանձնախմբի Ամանորի Ձեռնարկը



Յունուարի 8-ին, Գլենդէյլի «Դրիմ Փալաս» սրահում Գլենդէյլի Հայ Դատի Յանձնախումբը Ամանորեայ հաւաքոյթ էր կազմակերպել՝ առիթ տալով քաղաքի պաշտօնեաներին եւ գործօնանդամներին հանդիպել եւ հաճելի ժամանակ անցկացնել: Իսկ հայ դատի յանձնախմբի Գլենդէյլի մասնաճիւղի համար երեկոյթը իւրօրինակ հաշուետւութեան առիթ է, թէ ինչ է կատարուել անցած տարուայ ընթացքում եւ ինչ ծրագրեր կան յաջորդ տարուայ համար:

Հաւաքոյթին մասնակցում էին քաղաքապետարանի, կրթութեան եւ այլ բնագաւառների պաշտօնեաներ, յանձնաժողովների ու քաղաքային մարմինների անդամներ եւ յանձնախմբի բարեկամները: Արդէն աւանդութիւն դարձած այսօրինակ հանդիպումների նպատակը փոխադարձ շփումն է ու ծանօթութիւնն է, նպատակաւորուած մէկ ընդհանուր գործին՝ քաղաքի եւ համայնքի բարելաւմանը:

Գլենդէյլի հայ Դատի գրասենեակի գործադիր տնօրէն Էլլեն Ասատրեանը ողջունեց եւ ներկայացրեց հիւրերին: Հոգեւոր հայրեր Խորեն Հապէշեան եւ Արտակ Դեմիրճեանը անգլերէն եւ հայերէն լեզուով ներկաներին փոխանցեցին, թէ ինչու հայերս Դեկտեմբեր 6-ին ենք տօնում Յիսուսի ծնունդը: Յանձնախմբի նախագահ Ջանգու Արմէնեանը հանդէս եկաւ անցած եւ ընթացիկ

տարուայ աշխատանքներին վերաբերող ելոյթով՝ ներկայացրեց Գլենդէյլի Հայ դատի յանձնախմբի՝ Գլենդէյլի Մասնաճիւղի նոր կազմի անդամներին: Հայ դատի յանձնախմբի նոր կազմի անդամներն էին Ջանգու Արմէնեան, Արմէն Աբրահամեան, Արմիկ Աւետիսեան, Սարգիս Ուրֆալեան, Սարգիս Փոլադեան, Յակոբ Չփոլորեան եւ Ջարեհ Սինանեանը:

Յանձնախումբը կարելորում է երիտասարդների հետ աշխատանքը՝ նրանց քաղաքական իրավիճակին տեղեկ պահելու պատրաստակամութեամբ: Երեկոյի ընթացքում Գլենդէյլի մասնաճիւղի վարժեցման ծրագրերին մասնակցած եւ աշխատանքներում համագործակցած երիտասարդներին վկայագրեր յանձնուեցին: Գլենդէյլի Հայ դատի Յանձնախումբը վերջին տարիներին լուրջ աշխատանք է ծաւալել Գլենդէյլի երիտասարդութեանը իր վարժեցման ծրագրերում ներառելու ուղղութեամբ: 2009-ի առաջին եռամսեակին յանձնախմբի վարժեցման ծրագրին են միացել՝ Սարգիս Բալագեօզեան, Դաւար Գագիլեան եւ Գագիկ Միսիթարեանը, իսկ Գլենդէյլի երիտասարդական Միաւորման (GYA) ի հետ ծաւալած համագործակցութեան ծրագրին մասնակցում են՝ Բենօ Բասիխի, Փոլինէ Մանասի եւ Իլա Սահակեանը:



Արմէն Լիլոյեանը այցելեց հայ բանտարկեալներին

Լոս Անջելեսի Հայաստանի Գլխավոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը Յունուար 10-ին այցելել է Լոս Անջելեսի հիւսիսային գաւառի ուղղիչ հիմնարկը (North County Correctional Facility), հայազգի բանտարկեալներին հանդիպելու եւ նրանց կեցութեան պայմաններին ծանօթանալու նպատակով:

Հիւպատոսութեան հաղորդագրութեան համաձայն, խօսելով աւելի քան 30 բանտարկեալների հետ, որոնք սպասուում են իրենց դատավարութեանը՝ հիւ-

պատոսը տեղեկութիւններ է փոխանցել արտասահմանի մէջ գտնուող Հայաստանի քաղաքացիների հանդէպ հիւպատոսութեան ունեցած պարտաւորութիւնների մասին, յոյս յայտնելով, որ ազատութիւն ստանալով՝ բանտարկեալները միաձուլուեն հասարակութեան մէջ եւ օգտագործելով կեանքի բազմազան հնարաւորութիւնները յառաջանան օրինապահ ճանապարհներով: Դիւանագետը փոխանցել է իր Նոր Տարուայ բարեմաղթանքները եւ կոչ

ուղղել ներկաներին, որ միշտ հաւատարիմ հայեր մնան՝ յոյսով լի եւ բարի ակնկալիքներով: Հիւպատոսը նաեւ հանդիպում է ունեցել բանտի բարձրաստիճան պաշտօնեաների հետ, խորհրդակցելով հայ բանտարկեալների հարցերի շուրջ:

Հիւպատոս Լիլոյեանին ընկերակցում էին փոխ-հիւպատոս՝ Սահակ Սարգսեանն ու Արեւմտեան թեմի հոգեւորականներ՝ Հայր Պարթեւն ու Սարգ. Յովհաննէսը: Հանդիպման վերջաւոր

ութեանը տեղի է ունեցել հայկական ճաշատեսակներով ու հայկական կենդանի երաժշտութեամբ խրախմանք:

Ստացուած տեղեկութիւնների համաձայն Արմէն Լիլոյեանը շուտով թողնելու է Լոս Անջելեսի Հիւպատոսական պաշտօնը ՀՀ Արտգործնախարարութեան մէջ այլ պաշտօն ստանձնելու համար, իսկ նրան փոխարինելու է Գրիգոր Յովհաննիսեանը, որը իր պաշտօնավարութիւնը սկսելու է Փետրուար մէկից:

ԼՈՒՐ ԵՒ ԿՎԱՐ



Մեր քաղաքում քիչ չէ այն տանտիկինների թիվը, որոնք տան տնտեսութիւնը վարելու, երեխաներին ու թոռներին խնամելու եւ դաստիարակելու կողքին նաեւ զբաղւում են իրենց նախասիրութիւններով: Այդ հայուհիներից մէկն է Տիկին Մաթիլտան, որի ձեռային աշխատանքները արդէն ծանօթ է նրանց, որոնք առիթն են ունեցել մասնակցելու նրա վաճառք-ցուցահանդեսներին:

# Եգակի Չարդեր

Տիկին Մաթիլտա Աբանեանը ծնուել է Պոլիսում: Միջնակարգ ուսումն ստանալուց յետոյ, անցել է Լիբանան, ուր եւ ամուսնացել եւ ունեցել է իր երկու զաւակներին: Աւելի քան 7-տարի է, որ ընտանիքով հաստատուել է ԱՄՆ:

Արուեստի աշխատանքներով սկսել է զբաղուել դեռ Լիբանանից: Ամենաշատ սիրել է ձեռագործներ հիւսել եւ զարդանախշել կաւէ ամանները՝ բազմատեսակ գծագրութիւններով: Չարդեղեններ պատրաստելու աշխատանքը սկսել է աւելի ուշ: Երեք տարի առաջ Նաւասարդեան խաղերի ընթացքին ցուցադրութեան է դրել իր աշխատանքները, որը մեծ ուշադրութեան են արժանացել իրենց իւրօրինակ ոճի համար:

Ներկայիս աշխատում է տանը՝ իր ազատ ժամերին: Յաճախորդները մօտ ու հեռու քաղաքներից վճնոցներ, թենոցներ եւ ականջօղեր են ապսպրում, վստահ լինելով, թէ իրենց զարդը լինելու է իւրայատուկ եւ միակը՝ իր տեսակի մէջ: Տիկին Մաթիլտան երբեք նոյն գործը չի կրկնում: Ամէն մի զարդից նա պատրաստում է միայն մէկ, եգակի օրինակ: Օգտագործում է շղթաներ, քարեր, ուլունքներ, մարգարիտներ, զանազան տեսակի թելեր եւ կաշիներ: Իսկ դրանց համադրումն ու ձեւաորումը կատարում է այնպէս վարպետօրէն, որ իւրաքանչիւր զարդ արուեստի մի աշխատանք է դառնում: Այն հարցումին, թէ արդեօք ունի իր գործերի ալբոմը, նա պատասխանում է, որ դիտմամբ նման մի ալբոմ չի պահում, որպէսզի երբեք նոյները չկրկնուեն: Նա նոյնպէս չի հետեւում այս ասպարեզում աշխատող այլ արուեստագէտների կատալոգներին: Այս կամ այն գործով զբաղուած լինելու պահին յանկարծ յղանում է միտքը եւ իմանում, թէ ինչ է ստեղծելու: Ընդունում է նաեւ հնաոճ կամ այլեւս անօգտագործելի մնացած զարդերը՝ ձեւափոխելու պատուէրներ: Յաճախորդները իրենց հագուստները նրա մօտ են բերում, որպէսզի համապատասխան գոյներով զարդեր պատրաստի նրանց համար: Նրա հիւսած վզկապերն ու շալերը գործնական լինելու հետ միաժամանակ նաեւ գեղեցիկ զարդեր են, որոնք կարող են զարդարել ամենապարզ հագուստը:

Նրա գործերը ցայժմ ներկայացուել են տարբեր միութիւնների ու վարժարանների, Գլենդէյլ քաղաքի Միասնութեան փառատօնի ու նաեւ Նաւասարդեան խաղերի շրջափակում կայացող ցուցահանդէս-վաճառքներին, արժանալով այցելուների կայն ընդունելութեանը: Տիկին Մաթիլտայի աշխատանքները տեսնելու կամ ապսպրելու համար կարելի է հեռաձայնել՝ (818) 399-5687 համարով:



## Գեղեցիկ լուսանկար

Ուրախալի է, բազմաբանակ ծնունդները Հայաստանում: 2008 թուին, եռեակների 2 դէպք է գրանցուել Հայաստանի Հանրապետութիւնում՝ երեքն էլ աղջիկներ: Մէկ դէպքը գրանցուել է ՀՕՄ-ի Ախուրեանի «Մօր-ու-Մանկան» Առողջութեան Կեդրոնում 2008-ի Դեկտեմբերին:

Եռեակի ընտանիքում կար եւս մէկ երեխայ եւ, ցաւօք սրտի, նրանք ապրում էին ժամանակաւոր տնակում եւ դժուարին պայմաններում: ՀՕՄ-ի Ախուրեանի «Մօր ու Մանկան» Առողջութեան Կենտրոնը կարելոր դեր է խաղացել այս ընկերային հարցը լուծելու ուղղութեամբ: Բազմաթիւ հեռուստաալիքներով հետապնդուել է այս խնդիրը եւ դրա արդիւնքում, նոր տարուայ նախօրէին, պետութեան կողմից ընտանիքին յատկացուել է բոլոր յարմարութիւններով երեք սենեականոց բնակարան՝ Գիւնրիի կենտրոնում: ՀՕՄ-ի «Մօր ու Մանկան» Կենտրոնը իր կողմից ընտանիքին լուացքի մեքենայ է նուիրել:

ԱՐՈՒԵՏԱԳԵՏՆԵՐԻ ՇԵՏ

Վահեն Եւ Արուեստագետ Ընկերները «Վանդակէն Դուրս» Կ'ելլեն



ՆԱԶ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Դարձեալ Վահէին հետ պիտի ըլլանք, իր միջոցով մենք մեզի հետ հարազատ զգալու համար: Վահէն այն տիպարն է, որ գծող, գրող, դերասան ու բեմադրիչ ըլլալու կողքին, է' մեր հոգիներուն մօտ եղող այն տիպարը, որուն հետ հաղորդակցիլը միշտ ուրախութիւն կը պատճառէ: Անցեալ տարի պատեհութիւնը ունեցանք վայելելու Վահէին հեղինակած ու բեմադրած «Պարոն Կարպիս»ը, որ բարոյական ըմբռնումներու ու բարքերու տարբերութենէն եւ սերունդներու բախումէն ծնած տրամ էր: Այդ գործը իւրաքանչիւր ամերիկահայու մէջ արթնցուց անցեալի յիշատակներ եւ ներկայ կեանքի իրողութենէն ծնած՝ ծիծաղաշարժ ու դառն ապրումներ: Վահէն այդ գործով վերադարձ մը ըրաւ դէպի իր նախասիրած արուեստի սեռը՝ թատրոնը:

Հիմա նոր գործ մը կը ներկայացուի մեզի, այս անգամ «Արուեստ» խումբին կողմէ, Վահէին բեմադրութեամբ, հաւաքական հեղինակութեամբ եւ Յենրիկ Մանսուրեանի արտադրութեամբ: «Արուեստ» խումբը վայելած ենք ասկէ առաջ եւ տարիներու բացակայութենէ ետք այս վերադարձը ողջունելի է: Կը նշանակէ, թէ իրագործուած յաջողութիւն մը իր հետքը ձգած է ժամանակին մէջ եւ այսօր հիմք կը ծառայէ նոր գործի մը: Վահէին անունը «Արուեստ» խումբին սերտօրէն կը կապուի, այն իմաստով, որ խորքին մէջ խումբ եւ անհատ յաճախ կը նոյնանան եւ այս պարագային առանցքային տիպարը Վահէն է դարձեալ, որքան ալ խումբը իր անունը ունենայ, կամ փոխուի գործին հեղինակները: Այս կը պատահի, որովհետեւ արուեստագէտի իր իւրայատուկ նկարագրով ու անմիջականութեամբ՝ Վահէն մագնիսական ուժով մը շրջապատը, իր ընկերները, արուեստ սիրողները իր շուրջ հաւաքելու բնատուր ծիրքը ունի: Ան իր միտ ու կացով, խօսք ու գործով արուեստի բոյրը կը փոխանցէ իր առօրեայ կեանքին մէջ իսկ: Ասոր վկայութիւնը ապրած են անձնապէս, երկար տարիներ իր հետ գործակցելով «Ասպարեզ» օրաթերթէն մերս: Լոսանճելըսահայ արուեստի կեանքէն մերս վերջին տասնամեակի Վահէին գործունէութիւնը՝ յատկապէս իր մենախօսութիւններով եւ թատրոնով, նոր էջ մը կը բանայ հայ արուեստի կեանքէն մերս ու զայն կը համեմէ տեղայնական աւիշով: Մենք պատեհութիւնը կ'ունենանք ապրելու մեր առօրեայէն ծնունդ առնող իրավիճակներ եւ զգացումներ ու յատ-

կապէս այժմեականանալու: Զանազան սերունդներ ներկայացնող դերասաններ-դերասանուհիներու համախմբումը եւ միասնաբար թատերաբեմ բարձրանալու յանգումութիւնը ինքնին գեղեցիկ խնորու մը փաստն է, արժանի առաւելագոյն գնահատանքի:

Այս անգամ բեմադրուածը զաւելտներ են, որոնք մեզ պիտի մղեն խնդալու եւ թօթափելու մեր առօրեայ կեանքի ծանրութիւնը: Գացէ՛ք, տեսէք «Վանդակէն Դուրս փախողները», կուշտ ու կուռ ծիծաղեցէ՛ք եւ վերադարձէք լիցքաւորուած ու թեթեւացած:

Այժմ խօսքը տանք Վահէին, իր հետ կատարած մեր հարցազրոյցին միջոցով:

Հանրութեան կը ներկայանաս նոր թատերախաղով մը՝ «Վանդակէն Դուրս», որ պիտի ներկայացուի «Արուեստ» խումբին կողմէ: Կրնա՞ս բացատրել «Արուեստ»ին եւ քու առանձին բեմադրութիւններու տարբերութիւնը:

Այս պարագային ամբողջովին խմբային աշխատանք է: Կարճ զաւելտներ են, որոնք գրուած են իմ, Վահէի Տէր Սարգիսեանի, Արա Մածունեանի եւ Յենրիկ Մանսուրեանի կողմէ եւ ես պարզապէս կը բեմադրեմ գործը: Հիմնականին մէջ նոյնիսկ բեմադրութիւնը խմբային կարելի է սեպել, որովհետեւ ահագին բան փորձով կ'ըլլայ եւ դերասաններուն ներդրումը միշտ հոն է: Ամենէն դժուարը այս պարագային արտադրիչին՝ Յենրիկ Մանսուրեանին գործն է, որովհետեւ դիւրին չէ այսքան բազմանդամ խումբի կարիքներուն հասնիլը:

Գործը, ինչպէս կ'ըսուի յատարարութեանց մէջ, կատակերգութիւն մըն է, ուր կարճ զաւելտներով կը ներկայացուին ուրախ տիպարներ: Բանի մը խօսք այս մասին:

Այո, կարճ, ծիծաղելի, խենդ ու խելառ կտորներ են եւ նպատակը միայն խնդացնել է: Ասիկա այն հազուադէպ ձեռնարկներն են, որ առիթը կուտայ մեզի, որ մեր պատեհներէն դուրս ելլենք ու հանրութեան առջեւ «կեղեցիկներ» ընենք:

Ի՞նչով կը տարբերին կամ կը նմանին «Պահարանէն Դուրս»ը եւ «Վանդակէն Դուրս»ը:

Ներկայացուածները բոլորովին նոր կտորներ են, բայց ոգին նոյնն է: Հիմնականին մէջ նոր ներկայացումի մը վրայ աշխատելուն պատճառը արդէն նախկիններուն յաջողութիւնն էր: Ամերիկացիները կ'ըսեն «ինչ որ կ'աշխատի մի փորձեր նորոգել», մենք ալ այդ օրինակին հետեւեցանք եւ մթնոլորտը նոյնը պահեցինք:

Ներկայացումը կը պարունակէ նաեւ բաժիններ YouTube-ի ձեռնարկները: Որո՞նք են այդ պատահիկները եւ ի՞նչ ձեւով անոնք կը ներմուծուին թատերախաղին մէջ:

Այդ պատահիկներն մէկը «Հայ-Թրքական Հաշտեցման Ժողով»ն է, իսկ միւսը «Փեշավար Անսամպլը», եւ երկուքն ալ բեն պիտի բարձրանան: Իր արողջութեան մէջ թեման հետեւեալն է: Ստային Տագնապներ Տառապող Հայ Արուեստագետներու Կազմակերպման Կայանի խենթերը ելոյթ մը կազմակերպած են եւ «Վանդակէն Դուրս»ը այդ ելոյթն է: Տեսակ մը առեւտնարգանք:

Որո՞նք են դերակատարները՝ գլխաւոր թէ երկրորդական դերերով:

Անշուշտ մենք՝ չորս հեղինակներս ալ բեն կ'ելլենք տարբեր դերերով: Կան նաեւ խումբին մնայուն անդամները՝ Արա Պաղտոյեան, Մորիս Գույումճեան, Սագո Պերպլեան, Շահէ Մանկրեան, Սալբի Եարտըմեան, Շահէ Պոյաճեան, Քրիստափոր Պետեան, Լեւոն Շանթ Տեմիրճեան, Մելիսա Մագման, Հելենա Կրիկորեան եւ չեն գիտեր, այնքան շատ ենք, որ հաւանաբար մէկ երկու անուն մոռցայ:

Ներկայացման թուական, ժամեր, վայր եւ սակ:

Ներկայացումները, ինչպէս յիշեցինք, տեղի պիտի ունենան Փետրուար 7-ին, 8-ին, 14-ին եւ 15-ին, «Արշակ Տիգրանեան» սրահին մէջ: Հասցէն է 1200 N. Cahuenga Boulevard, Los Angeles, CA 90038: Շաբաթ օրերը ներկայացումները կը սկսին երեկոյեան ժամը 8ին, իսկ Կիրակի օրերը երեկոյեան ժամը 7-ին: Ներկայացումներէն առաջ պիտի հրամցուին մեզէն, ատոր համար ալ կը խնդրուի աւելի կանուխ գալ: Մուտքի գինն է \$50.00:

Ձեր տոմսերը ձեռք ձգելու համար հեռաձայնեցէք 818-941-4800 թիւին, կամ այցելեցէք [www.itsmyseat.com](http://www.itsmyseat.com): Յաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է այցելել [www.myspace.com/out\\_of\\_the\\_cage](http://www.myspace.com/out_of_the_cage):

Advertisement for Sardarabad featuring a map of Armenia and text: Այցելեցէք Սարդարապատ Գրապուհն, Լաւագոյն Գիրքերու և Նուէրներու Կեդրոն, (818) 500-0790, www.Sardarabad.org, 1111 S. Glendale Ave, Glendale CA 91205, SARARABAD logo.

ՔԱՐԱՔԻ ԿԱՇՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

# Գլենդեյլի Պատանեկան Սիմֆոնիկ Նուագախումբը

## Նարե Դարիբեան

Առաջին հայեացքից, տեղի իմաստով, մեզ համար տարօրինակ է թւում, որ Գլենդեյլի պատանեկան սիմֆոնիկ նուագախումբը իր շաբաթական փորձերը կատարում է Յոլիվուդ Յիլզ գերեզմանատան Liberty Hall սրահում: Այո, դա այդպես է: Liberty Hall-ը անվճար տրամադրում է իր սրահը նուագախմբի փորձերի համար:

Այս տարի լրանում է նուագախմբի հիմնադրման 20-րդ տարին: Այդ տարիների ընթացքում նուագախումբը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Ալեքս թատրոնում, իր յայտագրում ունենալով դասական երաժշտության բազմազան ստեղծագործություններ:



Ինչպես ամեն տարի, նույնպես 2008-2009 տարեշրջանին, նուագախումբը ծրագրել է ունենալ երեք համերգներ: Առաջին համերգը տեղի ունեցավ Դեկտեմբեր 2-ին, Ալեքս թատրոնում, դիրիժոր Բրադ Քեյմաչի ղեկավարությամբ: Կատարուեցին Բեթովենի «Քորիոլան», սիմֆոնիկ նախերգանքը, Բեթովենի 8-րդ սիմֆոնիան, Ռիխարդ Վագների «Չիգֆրիդ Իդիլլ»ը, Ամերիկացի կոմպոզիտոր Էրնո Քոֆլանդի «Ռոդեր» բալետից հատուած: Յրբելեանական տարեշրջանի յաջորդ երկու համերգները տեղի կունենան գալիք Մարտի 17-ին, եւ Յունիս 2-ին:

Ինչպես պարզում է նուագախմբի անունից, նուագիչները բոլորը պատանիներ են 12-ից 20 տարեկան: Հարտութեամբ կարելի է ասել, որ նուագախմբի անդամներից հինգը հայեր են՝ Մարի Փանոսեան՝ ջութակ, Մայքըլ Նազլիկեան՝ ջութակ, Արամ Դարիբեան՝ ջութակ, Մարգարիթա Յունեսեան՝ ջութակ եւ Դանիել Բաղդասարեան՝ հորոյ:

Իսկ ինչպե՞ս կարելի է դառնալ նուագախմբի անդամ: Իւրաքանչիւր տարի կատարում է ընդունելութեան ունկնդրում (auditions): Ընդունելութեան ունկնդրմանը կարող են մասնակցել այն պատանիները, որոնք նուագագոյնը ունեն երկու տարուայ երաժշտական կրթութիւն:

Ունկնդրման ընթացքում պատանիները պետք է կատարեն solo ստեղծագործութիւն, կարողանան կարողալ թերթից (հանպատրաստի նուագել անձանօք միւթը), ցուցադրեն երաժշտական գործիքին տիրապետելու գիտելիքները: Իսկ արդէն որպէս նուագախմբի անդամ, պատանի երաժիշտը պար-



տադիր պետք է մասնակցի իր դպրոցի երաժշտական ծրագրերին, ունենայ իր անձնական գործիքը, եւ երաժշտական ուսուցիչը: Եւ քանի որ նուագախումբը ոչ շահութաբեր հաստատութիւն է, նուագախմբի տարեկան անդամավճարն է \$375.00: Բարեբախտաբար նուագախմբի միւթական խնդիրները հնարաւոր է լուծել՝ անհատ բարերարների, տարեկան անցկացրած աճուրդների եւ յատկապէս Լոս Անջելըս քաղաքի Arts Commision յանձնաժողովի օգնութիւնների միջոցով: Օգնութեան մի մասը յատկացում է երաժշտական կրթաթոշակին:

Նուագախումբը կոչում է՝ պատանեկան եւ այդ պատճառով է, որ նուագախմբի անդամները 2-ից 3 տարի են մնում նուագախմբում: Եւ այսպէս՝ «հնէրը» գնում են եւ՝ «նորերը» գալիս:

Շնորհիւ տաղանդաւոր եւ փորձառու դիրիժորի Բրադ Քեյմաչի, նուագախում-

բը ունեցել է բազմաթիւ յաջողութիւններ: Քեյմաչը եղել է Լեոնարդ Բերնստեյնի աշակերտը: Ուսանել է Ջուլիարդ երաժշտական համալսարանում, շրջանաւարտ է Նիւ Եորք նահանգի համալսարանի Purchase Կոնսերուատորիայի եւ ղեկավարել է մի շարք նուագախմբեր:

2007-ին, Գլենդեյլի պատանեկան սիմֆոնիկ նուագախումբը ընդգրկուեց Լոս Անջելըս Ֆիլհարմոնիայի Youth Partner Orchestra ծրագրի մէջ, որը հնարաւորութիւն է տալիս պատանի երաժիշտներին անձնապէս կապ ստեղծել Լոս Անջելըս Ֆիլհարմոնիայի երաժիշտների հետ, սովորել նրանցից, կատարողական փորձ ձեռք բերել:

Յաւելեալ տեղեկութիւնների համար այցելէք՝ [www.glendaleyouthorchestra.com](http://www.glendaleyouthorchestra.com) կայքէջը կամ կապուէք (323) 839-8135 հեռախօսահամարով:

**LA KINGS ARMENIAN HERITAGE NIGHT**  
**MONDAY, FEBRUARY 16TH AT 7:30 PM**

LOS ANGELES KINGS -VS- ATLANTA THRASHERS

**THE NHL'S FIRST ARMENIAN PLAYER ZACH BOGOSIAN!**

- 1 GAME TICKET •
- 1 KINGS/ARMENIAN MINI FLAG •
- POSTGAME PARTY AT CLUB NOKIA AT LA LIVE •

**STARTS AT \$27**  
 VIP Packages also available

To Buy Tickets Call 213-742-7216 or Visit [lakings.com/armenianheritage](http://lakings.com/armenianheritage)

ALEXANDER FROLOV | ZACH BOGOSIAN

PRIDE=PASSION=POWER  
 1.888.KINGS.LA | LAKINGS.COM


\*PLAYERS SUBJECT TO CHANGE

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒՔԻՆԵՐ

# Գլենդեյլի Քաղաքային Ընտրությունները, Մեկ Հայեացքով

## Ղալար Մալաքեան

Գլենդեյլի Ապրիլ ամսուայ քաղաքային ընտրութիւնները շուտով մօտենում են: Գլենդեյլի քաղաքային խորհուրդի, Դպրոցների խորհուրդի, Քուլտուրի խորհուրդի, քաղաքի հաշուապահի, եւ քաղաքի գործավարի ընտրութիւններին մասնակցող թեկնածուները անխոնջ ընտարապայքար են սկսում քաղաքում, իրենց ցանկացած աթոռը շահելու համար: Անցնող տարուայ ընթացքին քաղաքային խորհրդի կողմից հաստատուած ընտրական նոր օրէնքի ու նաեւ անկում ապրող տնտեսութեան պատճառով ընտարաշաւն ու ընտրութիւններն այս տարի զգալիօրէն տարբերուելու են: Յուսանք ընտրութիւններին բաւարար թուով Ամերիկահայերի մասնակցութիւնը պատճառ դառնայ,



հայ թեկնածուներ: 2007-ի ընտրութիւնների 22,319 քուէներից, հայ համայնքի քուէները ընդամենը 9,224 էին եւ այսպիսով հայութիւնը կորցրեց մէկ աթոռ եւս Քաղաքային խորհրդում: Հետեւաբար անցեալ երկու ընտրութիւնները Ամերիկահայութեան համար մեծ մարտահրաւերներ ստեղծեցին, առաջադրելով հետեւեալ հարցունը. Ինչպէ՞ս ընտրել այնպիսի ներկայացուցիչներ, որոնք կը լսեն բազմերանգ հասարակութեան տարբեր փոքրամասնութիւնների պահանջներն ու խնդիրները, մանաւանդ Գլենդեյլ քաղաքի Ամերիկահայութեան հարցերը:

Մտքերի փոխանակումով ընտրութեան ընթացքի մասին ու միատեղելով նրանց՝ կարելի է հաւաքել ընտրութիւններին յաղթելու հարկաւոր ծայները: Այս քաղաքի 80,000 հայերը ունեն իրենց ծայնը, սակայն այդ ծայնը միատեղելով ու միատեղելով է, որ լսելի է դառնում ընտրուած պաշտօնեաների համար:



որ մենք կարողանանք ընտրել այնպիսի պաշտօնեաներ, որոնք կը լսեն քաղաքի բնակիչների ծայնը եւ վերահասու կը լինեն նրանց պահանջներին: Քաղաքի պաշտօնեաների համար ընտրութիւնները կայանում են իւրաքանչիւր կենտ տարուայ, Ապրիլ ամսի առաջին երեքշաբթի օրը: Այս տարի՝ 2009-ին, ընտրութիւնները կայանալու են Ապրիլ 7-ին: Ընտրուելու են 3 անդամներ Գլենդեյլի Համայնքային Քուլտուրի Հոգաբարձուների խորհուրդի եւ Գլենդեյլի Դպրոցների Կրթաշրջանի Միացեալ Մարմնի (GUSD) համար: Նաեւ յառաջիկայ ընտրութիւններին կը ընտրուեն երեք անդամներ Քաղաքային խորհուրդի համար: Ընտրուելու են Քաղաքի Հաշուապահը եւ Քաղաքի Գործավարը: Առայժմ, տասներեք թեկնածուներ են գրանցուել Քաղաքային խորհուրդի երեք աթոռների համար: Վերընտրուելու կարգով ընտրութեան մասնակցում են Արա Նաճարեան, Բարե Եուսէֆեան եւ Ֆրանց Բուլիները: Քաղաքային խորհրդի միւս թեկնածուներն են՝ Վարդան Կարապետեան, Արամ Քազազեան, Շահէ Բէօրօլլեան, Էդուարդ Լաֆեան, Լեոնարդ Սանուկեան, Արամազդ Տէր Ստեփանեան, Լաուռա Ֆրիդման, Մայքըլ Թիախան, Լեոնոր Սոլիս եւ Բրուս Ֆիլիպսը: Ռոնալդ Բրուքին եւ Րաֆֆի Մանուկեանը մրցելու են Քաղաքի Հաշուապահի աթոռի համար: Արտաշէս Քացախեանը Քաղաքի Քարտուղարի պաշտօնի համար միակ թեկնածուն է:

Զէյնուկ Աբեղին, Սերգէյ Աֆթանդիլեան, Անն Բանսֆորդ եւ Վոլեմ Աղաջանեանը: Նախորդ տարուայ ընթացքին ընտրութիւնների համար հաստատուած օրէնքների պատճառով ընտարաշաւներում մեծ փոփոխութիւնները արդէն իսկ ակնյայտ են: Թեկնածուներին թուում է, որ ընտրապայքարներին գումար նուիրելու առաւելագոյն հազար դոլարի սահմանումը իրենց համար դժուար կացութիւն է ստեղծել: Տնտեսական ներկայ կացութեան պատճառով եւս նուիրատութիւններն այս տարի համեմատաբար քիչ են եւ բնակիչները վարանում են թեկնածուների ընտարաշաւներին նուիրատութիւն կատարելուց: Անցեալ տարուայ Յուլիսին նուիրատութիւնների համար վաւերացուած նոր օրինագծի պատճառով, թեկնածուներից շատերը դժուարանում են իրենց ամբողջութեամբ ներկայացնել: Այն ժամանակ արդէն իսկ մտահոգութիւն էր հնչեցում, որ նոր նախագիծը արգիլելու է նոր թեկնածուների ընտրութիւնը: Այս մտահոգութիւնը անկում ապրող տնտեսութեան մէջ աւելի ցցուն է դառնում:

Ընտրութեանը նուիրատութիւնները սահմանափակող օրէնքից բացի, բացակայ քուէաթերթիկների կամ հեռակայ քուէարկողների մասին նաեւ մի այլ սահմանափակող օրէնք անցաւ՝ Փետրուար 2008-ին: Այս հակամարտական տրամադրուածութիւնը ներշնչող օրէնքը բողոքի ալիք բարձրացրեց Գլենդեյլում ապրող տարբեր փոքրամասնութիւնների եւ դրանց շարքում՝ Ամերիկահայերի մօտ:

2005ի Ապրիլին, Ամերիկահայ ծայների 61%-ը հեռակայ քուէարկողներ էին: 2007-ի ընտրութիւններում այս թիւը բարձրացաւ 70%-ի: Այժմ, նոր օրէնքի համաձայն հեռակայ քուէները ուղղակի առաքւում են Քաղաքի Քարտուղարի գրասենեակը՝ ուր տարբեր քաղաքական կազմակերպութիւններն ու ընտրապայքարի շտաբները դժուարութեամբ են կարողանալու ազդել ոչ անգլիախօս փոքրամասնութեան անդամների, նամա-

նաւանդ մեծ թիւ կազմող հայ հեռակայ քուէարկողների վրայ: Առաւել եւս այս օրէնքը առաջին սերունդի գաղթականներին զրկում է այն ուսուցումներից ու սպասարկութիւններից, որոնք հարկաւոր են նրանց ընտրութեան մասնակցի դարձնելու համար:

Ետադարձ ակնարկ նետելով անցեալ ընտրութիւններին, կարելի է անդրադառնալ թէ ինչ պէտք է անել, որպէսզի Գլենդեյլի Ամերիկահայ բնակիչների ծայնը լսելի դառնայ: Գլենդեյլում ապրող 80,000 հայ բնակիչներից միայն 24,000-ն է գրանցուած քուէարկելու համար: 2005-ի Ապրիլի ճակատագրական ընտրութիւններին 23,183 ծայներից միայն 9,047 ծայներն էին պատկանում հայ համայնքին: Ընտրութիւններին մասնակցութեան այս թուի արդիւնքն եղաւ այն, որ Քաղաքի խորհուրդի վերընտրութեան համար առկայ չորս աթոռների համար ընտրուեցին միայն երկու:



## Յայտարարութիւն

### Աստուածաշունչի Սերտողութեան Դասընթացքներ

Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ  
500 S. Central Ave. Glendale, Ca 91204  
Ս. Գրոց Դասընթացքներ



### Տեղի պիտի ունենայ ամեն երեքշաբթի երեկոները ժամը 7:30-էն սկսեալ

### Պահը կը վարէ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէ՝


### Հոգշ. Տ. Պարթեւ վրդ. Կիլիւմեան

Սիրով կը հրաւիրենք բոլոր անոնք, որոնք ծարաւ ունին Աստուծոյ խօսքին, ներկայ գտնուելու, յագենալու, հոգեւոր գիտելիքներով հարստանալու եւ Քրիստոսի լոյսով լուսաւորուելու:

### Հովիւք եւ Հոգաբարձութիւն

ԽԱՉՔԱՆ ԹԻՒ 39 - ԿԱԶՄԵՑ՝ Ժ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15




**ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ**

**1** Ընդհանրապես որոշ տարիքից յետոյ օգտագործում ենք՝ լաւ տեսնելու համար - կարճ ու կտրուկ խօսք: **2** Ծնողներից մէկը (տառաախալով) - փոքր խանութ - եղէգնուտ: **3** Աջից՝ ուրիշ - գոյգ չի - խառն՝ արի: **4** Արաբական խալիֆութեան մեծագոյն խալիֆը - ջրի վազքի համար փորուած երկարաւուն փոս - կրկնուած բաղաձայն: **5** Ամբողջից մի կտոր - շրջագծի, չափը, տարածութիւնը ճշտորոշի: **6** Ժխտական նախածանց - բոյս է, որի ցօղուններից թել ու թոկ են պատրաստում - պարտութեան մատնող զինուորների երգը: **7** Աջից՝ խեցեղէն պատրաստելու հողը - առաջ - սկիզբը ը դարձրած՝ սրտակից, մտերիմ: **8** Հեղուկ նիւթեր, որ սնուցանում են մարմինը - կտուր - պտուղը ծառից պոկի, մէկ-մէկ հաւաքի: **9** «Մատեան ողբերգութեան»-ի միւս անունը՝ հեղինակի անունով կոչուած - չխօսած, չյայտնած - տ պոչով՝ ձեռքի վրայ 5 հատ ունենք: **10** Բանջարանոցային բոյս է, լայն ու իրար վրայ, իրար գրկած տերեւներով - տոհմի, գերդաստանի, ընտանիքի մեծերը: **11** Յ պոչով՝ գոյութիւն ունի - արցունք թափելու գործողութիւնը - ծայնի տեսակ է (երգչի) - ստացական դերանուն (ա դէմք, եգ. թիւ): **12** Վերցնի եւ տանի - քարքարոտ սար - երկրաչափական ծայրերն իրար միացած կոր գիծ: **13** Այբբենական 21 - արքայական բազմոց, մեծ - գոյութիւն ունեն: **14** Գլուխը ս դարձրած՝ փողաւոր նուագարան է - եզի - աջից՝ որեւէ նիւթ՝ հեղուկ կամ չոր, պահելու սարք: **15** Եկեղեցական իշխանաւորի դրած պատիժը՝ հաւատացեալի վրայ - հայոց համար սուգի եւ ոգեկոչումի ամիս:


**ՈՒՂՂԱԶԱՅԵԱՑ**

**1** Ուրիշ կրօն՝ հաւատամք ունեցող - որեւէ գործի, խօսքի սկսման կետը: **2** Հնուն նաւերի առագաստները դրա վրայ էին բարձրացուած - մակոյկ - ցածից՝ գործողութիւն: **3** Ցածից՝ առանձնացած, առանց ընկերոջ - ազատ, հանգստի օր - տրականի հոլովակերտ: **4** Յարաբերական դերանուն է - ցածից՝ հերկ - կի պոչով՝ ոչ ուղղակի, թեք կերպով - քայլի, հեռացիր (հրամայական): **5** Խակի հակառակը - պ պոչով՝ հանգոյց - ցածից՝ սարք, որով ուտում ենք հեղուկ կերակուրները: **6** Հանգոյց - բազում - Ռուբինեան իշխանապետերից, որին պալատականները սպանեցին: **7** Գաղտնի գործակալ - այժմ դրանով էք զբաղուած - ն պոչով՝ հայոց ազգանունի վերջաւորութիւնը: **8** Ժխտական նախածանց է - յանձնի - անձնական դերանուն (գ դէմք, եգ.) - զաւակ, որդի: **9** Յորեմի խորձերը այդտեղ են հաւաքում՝ ծեծելու համար - կերակուր է՝ մսի եւ ցորենի խառնուրդով պատրաստուած - մարդու մշտական ընկերը: **10** Կ գլխով՝ ողորկ - խառը՝ մաղ - քրիստոնէական հասկացութեամբ մեղքերը թողնելու վայր: **11** Երեք թեւ ունեցող - ցածից՝ ուժով մի բան մի տեղից դուրս քաշած, պոկած: **12** Ապուր (պոսկ.) - մենք դրա տերն ենք - խղճա (հրամայական) - ն եւ պ: **13** Երկու կտոր իրար միացնելու միջոց - ցածից՝ հ գլխով՝ մի բանից դուրը գայ - պատկեր: **14** Տարին 12 հատ ունի - շատ սիրուն - տարուայ: **15** Օգնութիւն, օժանդակութիւն (տառաախալով) - ցածից՝ առարկայ - գիտեմալ:

Խաչքառի լուծումի մէջ բառամիջի «Լ» հնչիւնը գրել «Լ» առանց «ո» ի իսկ «ու» հնչիւնը գրել մի աղիւսակի մէջ:



**2009-ի Ծաղիկների Փառատուն**



2009-ի Յունուարի 1-ին, Փասադինա քաղաքում տեղի ունեցաւ Վարդերի Փառատունը (Rose Parade): Այս տարուայ փառատունի թեման էր "Hats Off to Entertainment", որին Գլենդէյլը մասնակցելու է "Sneak Preview" կոչուող լաստով:



Ծաղիկներով ու զանազան բոյսերով պատրաստուած ու զարդարուած այս լաստը ներկայացնում էր Գլենդէյլի պատմական շինութիւններից՝ Ալեքս Թատրոնում ցուցադրուող մի տեսաժապաւէնի պրեմիերայի տեսարանը: Լաստի պատրաստութեան աշխատանքներին մասնակցել են Գլենդէյլի 13-տարեկանից վեր բազմաթիւ կամաւորներ: Յունուարի 1-ի շքահանդէսին մասնակցելու նախօրեակին լաստը ցուցադրութեան դրուեց Բրեմօ պողոտայի վրայ: Անցեալ տարիների ընթացքում մօտաւորապէս 40 միլիոն ամերիկացիներ դիտել են Վարդերի Փառատունը, որը առաջին անգամ տեղի է ունեցել 1890 թուին: Փասադինայի ոստիկանական բաժանմունքի տուեալներով ամէն տարի մօտ մէկ միլիոն հոգի այցելում են շքահանդէսը: 70,000 այցելուներ շքահանդէսին յաջորդող օրերի ընթացքին են այցելում այն: Յունուարի 1-ի շքահանդէսը մօտից դիտելու համար մարդիկ նախորդ օրուանից գիշերել էին շքահանդէսի ճանապարհին կառուցուած ժամանակաւոր նստարաններին կամ պարզապէս ճանապարհի երկայնքին: Շքահանդէսը կենդանի հաղորդումով պատկերասփռում էր բազմաթիւ հեռուստակայաններից: Լաստերը կառուցում են հետեւելով որոշակի չափանիշների ու նրանց կառուցման մէջ գործածուած են միայն բնական նիւթեր: Իսկ շարժուելու համար նրանք օգտուած են յատուկ սարքերից: Քաղաքները, կազմակերպութիւններն ու ընկերութիւնները կարող են լաստերով մասնակցել այս տօնախմբութեանը: Գլենդէյլի "Sneak Preview" կոչուող լաստը այս տարի պարգեւատրուեց Past Presidents մրցանակով:



ԽԱՉՔԱՆ ԹԻՒ 39-Ի ԼՈՒԾՈՒՄ

ՕՐԱԿԱՐԳ

**Բաժանորդագրուեցէք Օրակարգին**

Բաժանորդագրուեցէք Գլենդէյլի հայութեան միակ քաղաքացիական պարբերաթերթին, ձեր եւ ձեր հարազատների համար:  
**Բաժանորդութեան գինն է տարեկան \$20:**  
**Բաժանորդագրութեան համար, Ձեր չէքերը ուղարկէք ներքեւի հասցէին՝**  
 Oragark • PO Box 4214 • Glendale, CA 91222  
 Եթէ չէք վրայ չի նշուել ձեր հասցէն, առանձին թղթի վրայ նշէք ձեր հասցէն:  
 Քրեդիթ քարդով բաժանորդագրուելու համար այցելէք մեր կայքէջը՝  
[www.oragark.com](http://www.oragark.com)

**ԺԱՄԱՆԱԿԱՆՈՅՑ**

**Գլենդեյլի ժամանակացույց**

**Յունուար 31**

Դասախօսական Երեկոյ՝ Հանրային Մամուլը Հայկական Գաղութում Կազմակերպիչ՝ Հայ Դատի Արհեստավարժների Ցանց եւ Վուդբերի Համալսարանի Հայ Ուսանողների Միութիւն ժամ՝ 13:30-15:30  
Վայր՝ Վուդբերի Համալսարան Hensel Hall Conference Room  
Մուտք՝ ազատ  
818-500-1918

**Փետրուար 4**

Գրական Հանդիպում Ներկայացուցելու է Գրիշ Դաւթեանի գործերը Կազմակերպիչ՝ Քալիֆորնիայի Հայ Գրողների Միութիւն ժամ՝ 19:00-21:00  
Վայր՝ Գլենդեյլի Հանրային Գրադարան  
Մուտք՝ ազատ  
818-500-1532

**Փետրուար 7**

Արշաւ դէպի Աստղադիտարան Կազմակերպիչ՝ Լոս Անջելեսի Հայկ. Մշակույթի Հանդիպման Խումբ The Los Angeles Armenian Culture Meetup Group ժամ՝ 13:00  
Վայր՝ Գրիֆիթ Ջրօսայգի  
Մուտք՝ ազատ

**Փետրուար 7, 8, 14, 15**

Թատրոն Վանդակից Դուրս Կազմակերպիչ՝ Արուեստ Խումբ ժամ՝ 19:00  
Վայր՝ Walter & Karibian Hall  
Մուտք-Ուտելիք՝ \$50  
Քրիսթին՝ 818-249-1428

**Փետրուար 7- Մարտ 14**

Նկարչական Ցուցահանդէս՝ Այս է Ապագան Նախքան Պատահելը (This is the Future Before it Happened) ժամ՝ 12:00-18:00  
Վայր՝ Գլենդեյլի Համայնքային Քուլտուրի Արուեստի Սրահ College s Library Building,  
Մուտք՝ ազատ

**Փետրուար 12**

Պարի Դասընթացներ՝ Պոզիկեանի Հայկական եւ Յունական Պար Կազմակերպիչ՝ Թոմ Պոզիկեան ժամ՝ 19:00

Վայր՝ Գլենդեյլի Սիւիք Սրահ 1401 N Verdugo Rd  
Մուտք՝ \$20  
562-941-0845

**Փետրուար 14**

Վաենթայնգի Օրոսայ Ուրախ Երեկոյ Ռոբերթ Չիլինգիրեանի հետ Կազմակերպիչ՝ Rogari Entertainment ժամ՝ 21:00  
Վայր՝ Մոնթրոզ Քոննեքշն  
Մուտք՝ \$45  
818-437-4008

**Փետրուար 16**

Հաքի-ի Մրցութիւն եւ ապա հիւրասիրութիւն Լոս Անջելես Քիմգոգի Հայկական Աւանդական Երեկոյ Կազմակերպիչ՝ Լոս Անջելես Քիմգոգ եւ Հայ Դատի Յանձնախումբ ժամ՝ 19:30  
Վայր՝ Staples Center  
Մուտք սկսեալ՝ \$27  
213-742-7216

**Փետրուար 21**

Ար-Մին "The Risin Son" Չայնասկաւառակի Շնորհահանդէս Կազմակերպիչ՝ Փենթագոն ժամ՝ 19:00  
Վայր՝ Սթարզ Թատերասրահ  
Մուտք՝ \$25  
818-919-6665

**Փետրուար 23**

Դասախօսական Երեկոյ՝ Աւարայրի եւ Արարատի ճակատամարտերը Կազմակերպիչ՝ Արեւմտահայասանի Պաշտպանութեան Յանձնախումբ Defense Council of Western Armenia ժամ՝ 19:00  
Վայր՝ Գլենդեյլի Հանրային Գրադարան  
Մուտք՝ ազատ  
818-601-4049

**Փետրուար 27**

Գալա-Պարահանդէս Կազմակերպիչ՝ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն AGBU Generation Next ժամ՝ 19:30  
Վայր՝ Castaway Starlight Ballroom  
Մուտք՝ \$125  
626-794-7942

**Սարոյի Պարի Դասարաններ**

Երկուշաբթի օրերը՝ ՀՍԸՄ Գլենդեյլի Արարատ, 818.434.7813, Այդա Երեքշաբթի օրերը՝ ՀՕՄԻ Բրբանքի մասնաճիւղ, 818.640.6513, Ժենիւն Չորեքշաբթի օրերը՝ ՀՕՄԻ Լա Քրասնեթայի մասնաճիւղ, 818.653.1005, Շաքլ Հինգշաբթի օրերը՝ Գլենդեյլ, Ս. Գրիգոր Եկեղեցի, 818.232.1457, Դալիլա

**Վերապրող Ղազարոս Գատեմեանը մեր միջից գնաց**  
(Շարունակութիւն առաջին էջից)



Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի հաղորդագրութեան համաձայն 1907-ին Չէյթունում ծնուած Ղազարոս Գատեմեանը վերջին տարիներում իր ներկայութեամբ ու մասնակցութեամբ ներշնչման ու խրախուսանքի աղբիւր է հանդիսացել հայ երիտասարդութեան համար, Հայկական Ցեղասպանութեան պահանջատիրական ձեռնարկներում: Գատեմեանը մասնակցում էր թրքական հիւպատոսարանի առջեւ կազմակերպուած Ապրիլ 24-ի ցոյցերին եւ 2006-ին մասնակցեց նաեւ ոգեկոչման հացադուլին: Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Կենտրոնական Վարչութեան նախագահ՝ Վաչէ Թովմասեանի վկայութեամբ՝ «Ղազարոս Գատեմեանի կեանքը իբրեւ մղիչ ուժ ծառայեց մեզ համար Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հարցը հետապնդելու ուղղութեամբ»: «Ժամանակի հետ պակսում ու պակսում է Հայոց Ցեղասպանութեան վերապրողների թիւը, սակայն իրենց յիշատակը ոգեպնդելու է յաջորդ սերնդին, որպէսզի շարունակեն արդարութեան պահանջը հայկական հարցի համար», աւելացրեց նա:

Յոկտեմբեր 16, 2007-ին, երբ Գլենդեյլի Քաղաքային խորհուրդը միաձայնութեամբ որոշեցրեց բանաձեւ, որ ԱՄՆի Ներկայացուցիչների Տնից պահանջում էր՝ որոշեցրել Հայկական Ցեղասպանութեան մասին թիւ 106 բանաձեւը, վերապրող Ղազարոս Գատեմեանը յանուն Գլենդեյլի Հայ Դատի Յանձնախմբի՝ ստանձնեց բանաձեւի յայտարարագիրը քաղաքապետ Արա Նաջարեանի ձեռքից:

**TRIP TO ARMENIA**  
**June 29, 2009 - July 15, 2009**



Flying with Austrian Airline  
with a day tour of VIENNA

(not included in the price)



\$2,500.00 + Tax

Includes airfare, hotel  
with breakfast and tours

★ main attractions ★

( Kharabagh, Jermouk & Arakats)

Deposit \$500.00 (non-refundable)

★ due by 2/16/2009 ★

Total money due by 02/27/2009 no exception

Hurry seats are limited call for info 818-324-0979



**ԴԻՏԷՔ ՓԱՐՈՍ ՇԵՌԻՍՏՐԱԳԻՐԸ**  
**ԿԻՐԱԿԻ ԵՐԵԿՈՆԵՐԸ ԺԱՄԸ 8:30 - 9:00**  
**ARTN - Charter Channel 288**



# Ընտրենք Կարեն Եղբայրեանին Բրբանքի Քաղաքային Խորհրդի Անդամ

## Elect Garen Yegparian to the Burbank City Council

Կարեն Եղբայրեանը քաղաքային խորհրդի անդամ դառնալու ընտրապայքարի մեջ է մտել, որովհետեւ նա ուզում է բարելավել Բրբանքի բնակչության կեանքի մակարդակը եւ մասնաւորաբար տնտեսական այս ճգնաժամի ժամանակահատուածում, ապահովել քաղաքային կառավարութեան բոլոր օղակների թափանցիկութիւնն ու ամբողջական հաշուետուութիւնը: Կարենը այս ընտրապայքարին մասնակցող բոլոր թեկնածուներից ամենափորձառուն է եւ դրա համար է, որ նրան զօրակցում են նահանգային խորհրդի անդամ՝ Փոլ Գրիգորեանը, Հայ Դատի Յանձնախումբը, Սիերա Ակումբն ու Բրբանքի համայնքի մի շարք այլ ղեկավարները:

Կարենը առաւել քան 15 տարի մեր համայնքը ներկայացրել է Բրբանքում եւ ընտրուելու պարագային, նա ձեզ է ներկայացնելու եւ ձեր շահերն է պաշտպանելու Բրբանքի Քաղաքային Խորհրդում:

### Կարեն Եղբայրեանի օգտին քուէարկելու համար հետեւե՛ք այս քայլերին՝

1. Հետեւե՛ք փոստով ստացած ձեր նամակներին: Ձեր պաշտօնական քուէաթերթիկը պետք է ձեր տուն հասնի Փետրուարի առաջին շաբաթուայ ընթացքում:
2. Սեւ գրիչով ամբողջութեամբ սեւացրե՛ք Կարեն Եղբայրեանի անուան աջ կողմի տնակը:
3. Կտրե՛ք քուէաթերթիկի վերեւի մասը. սա ձեր ստացականն է: Դրե՛ք ամբողջացուած քուէաթերթիկը՝ վերադարձի հասցէ ունեցող ծրարի մէջ:
4. ԿԱՐԵՆԻՐ. Ստորագրե՛ք այնտեղ, ուր նշուել է X տառով եւ լրացրե՛ք ձեր հասցեն ու թուականը ծրարի ետեւի մասում:
5. Դրոշմաթուղթ փակցրե՛ք ծրարի վրայ ու անմիջապէս փոստով առաքե՛ք ծրարը:



Լսելի դարձրե՛ք ձեր ձայնը:  
Լսելի դարձնենք մեր ձայնը:  
Քուէարկե՛ք Կարեն Եղբայրեանին:



Make your voice heard.  
Make our voice heard.  
Vote for Garen Yegparian.

Եթէ չէք ստացել ձեր քուէաթերթիկը, կամ հարցումներ ունեք ընտրութեան մասին, հեռախօսե՛ք մեր գրասենեակը (818) 563-3918 համարով:

If you did not receive your ballot or you have questions about voting,  
please call our office at (818) 563-3918.

[www.garenforcouncil.org](http://www.garenforcouncil.org) (818) 563-3918